ԼՈՒՍԱՓԱՅԼ

1974

Գ

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄՈՒՐԴ

1974



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Վահան եպիսկոպոս Տերյանին Ադրբեջանի մայրց առաջնորդ նշանակելու մասին 3

Հատվածներ սուրբ Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից 4

Ս. Վանոնդյանց քահանայից տոնը Մայր Աթոռում 13

Սրբոց Վարդանանց զորավարաց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 16

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 20

Հանդիսություններ՝ նվիրված ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին . . 22

Տորոնտոյի հայոց ս. Երրորդություն եկեղեցու օծման քսանամյակը 24

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ—Մեծանուն և վաստակաշատ պատմաբաններ Լեոյի և Ն. Ադոնցի նորահայտ նամակները Կ. Պոլսի պատրիարք ամենապատիվ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին 26

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ—Ծաղկող Ծերան քահանա 28

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 34

Լուրեր Հայաստանյայց եկեղեցու թեմերից 36

Լուրեր քույր եկեղեցիներից 41

Լուրեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդից 44

Հանգիստ արժանապատիվ տ. Մամիկոն քահանա Աբրահամյանի 48

Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 1/III 1974 թ.: Ստորագրված է տպագրության 15/IV 1974 թ.:

Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 134

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Ց. Ց. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ողորմութեամբ Աստուծոյ ամենակալին մեր սուրբ եկեղեցին, թէ՛ ի Հայաստան և թէ՛ ի սփիւռս աշխարհի, իր հովանու ներքև պահում, պահպանում և հոգևոր սնունդ է բաշխում մեր հաւատացեալ ժողովրդին և առաջնորդում նրան աւետարանական սիրոյ և խաղաղութեան ճանապարհով:

Այսօր Մենք ուրախ ենք ձեզ աւետելու, թէ ձեր թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ տ. Յուսիկ եպիսկոպոս նոր և պատասխանատու պաշտօնի կոչուած լինելով Մայր Աթոռում, իբրև նրան յաջորդը նշանակել ենք գերաշնորհ տ. Վահան եպիսկոպոս Տէրեանին, որ երկար տարիներ ժրաջանութեամբ ղեկավարելուց յետոյ Արարատեան թեմը, այժմ գալիս է ձեր թեմում շարունակելու իր ծառայութեան առաքելութիւնը, այն է՝ է՛լ աւելի պայծառացնելու թեմիդ եկեղեցիները, հոգեպէս մխիթարելու հաւատացեալ մեր ժողովուրդը և է՛լ աւելի ջերմացնելու եղբայրական սէրն ու փոխադարձ գնահատանքը ադրբէջանցի և հայ բարեկամ ժողովուրդների միջև, Սովետական բազմազգ մեծ Միութեան խաղաղ ու հզօր ընտանիքում:

Սիրով և յարգանքով ընդունեցէք ձեր թեմի նոր առաջնորդ տ. Վահան եպիսկոպոսին և ամէն կերպ նեցուկ կանգնեցէք նրան, որպէսզի առաւել արդիւնաւէտութեամբ նա ի կատար ածի իր հոգևոր առաքելութիւնը:

Թող Աստուած ձեզ լինի միշտ պահապան և օգնական և պահի ձեզ բոլորիդ խաղաղութեան մէջ արևշատ երկար տարիներ:

«Եւ Աստուած իմ, լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք ի Քրիստոս Յիսուս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւիտեանս ամէն» (Փիլիպ. Դ 19):

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 18-ը Հոկտեմբերի
1978 փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԻԲ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 757

ՀԱՏՎԱԾՆԵՐ
ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ»-ԻՑ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԽՈՍՈՒՄ ԵՎ ՊԱՏԳԱՄՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՅՍՕՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 1979 թվականի հունվար 16 թվակիր սրբատառ կոնդակի հրահանգով, սփյուռքի ողջ տարածքի վրա, հայկական բոլոր համայնքներում շարունակվում են ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունները:

Հայոց Հայրապետի թելադրությամբ «Էջմիածին» ամսագրի սույն համարում մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում ս. Ներսես Շնորհալու հայրապետական հորդորները ու պատգամները՝ ուղղված մանավանդ հայ հոգևորականությանը, քաղելով նրա նշանավոր «Թուղթ ընդհանրական» անդրանիկ կոնդակից, կոնդակ, որը գրվել է 1166 թվականին:

Ս. Ներսես Շնորհալու քրիստոնեական մտածողության, բարոյականության և հայկականության ճշմարիտ ներշնչումով գրված մատենագրական, գրական հարուստ և բազմաժանր ստեղծագործության մեջ բացառիկ տեղ է գրավում նրա «Թուղթ ընդհանրական»-ը՝ որպես պատմական նշանակություն ունեցող և իր ժամանակի պատկերը ներկայացնող հարազատ ստեղծագործություն, որպես առաքինության, բարոյական գեղեցկության և սրբության հուշարձան:

«Թուղթ ընդհանրական»-ը բնութագրվել է որպես «ջահ լուսատու աստուածասիրացն մտաց, աղբիւր շնորհաբուղխ վտակեալ յարբումն ոգւոց նոցին ծարաւեաց, պանծալի մատեան... յորում գանձեալ են **պատուիրանք աստուածային և խրատք հոգեշահք առ համօրէն դասս հոգևորականաց և ժողովրդականաց**» («Թուղթ ընդհանրական», ի ս. Էջմիածին, 1865, «Ազդ», էջ 1): Այս իմաստով «Ընդհանրական»-ը պատկանում է ոչ միայն մեր օրերին, այլև գալիք բոլոր ժամանակներին և սերունդներին:

«Ընդհանրական»-ը տիպար գրվածք մըն է իր տեսակին մեջ և պարունակությամբ կատարյալ բովանդակություն մըն է յուրաքանչյուր դասակարգի

կրոնական և եկեղեցական պարտավորությանց։ «Ընդհանրական»-ը յուր հրատարակութենեն մինչև մեր օրերը ութը դարերու ընթացքին մեջ, բան մը կորուսած չէ յուր զորութենեն և ազդեցութենեն, և այսօր ալ տակավին լավագույն և ընտրելագույն ձեռնարկն է եկեղեցական կանոնաց, և եկեղեցական բարեկարգության լավագույն ուղեցույցն է» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Ազգապատում», հտր. Ա, 1959, Բեյրութ, էջ 1403)։

«Ընդհանրական»-ի առաջին չորս գլուխները ուղղված են հոգևորականությանն ու նվիրված նրանց հոգևոր առաքելությանը. «Առ կրօնաւորս խառազնազգեացս որ ի վանորայս» (էջ 23—46), «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց» (էջ 46—52), «Առ առաջնորդս եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի, որ կոչին եպիսկոպոսունք» (էջ 52—67), «Առ դասս քահանայից» (էջ 67—82)։

Ս. Ներսես Շնորհալու օրով Արևելյան Հայաստանում հայ պետականության վերացումով և ապա Կիլիկիայում «ի յանկմանէ ազգիս հայոց», անշքացել էին մեր հոգևոր, կրթական օջախներն ու վանքերը, խաթարվել ու վերացել սահակ-մեսրոպյան կարգն ու կանոնը, հայ եկեղեցու դարավոր համասացության եկեղեցական-ծիսական պաշտոնագրությունը, թուլացել հավատն ու կարգապահությունը հայ հոգևորականության մեջ. «Իշխանութիւնն մեր բարձեալ... եկեղեցին մեր խրթնացեալ, աշխարհս մեր յազգաց օտարաց աւերեալ, ամենեքեան ցրտացեալ առ սէր աստուածայնոյն» («Սովերք հայկականք», ԺԴ, էջ 41)։

Շնորհալին ձեռնարկում էր հայ եկեղեցու բարեկարգությանը։ Բայց նա մտածում էր, որ անկարելի է եկեղեցական բարեկարգությունն առանց հավատավոր, կարգապահ և զարգացած հոգևորականության։

Այդ իսկ պատճառով Շնորհալին «Նորոգէր զառաջին սուրբ հարցն հաստատեալ կանոնս» հոգևորականության համար՝ շարադրելով «Թուղթ ընդհանրական»-ի առաջին չորս գլուխները։

Շնորհալին իր ժամանակի հոգևորականության սայթաքումներն ու տգիտությունը բացատրում է «ի նուազեալ բարեաց ժամանակս մեր», հոգևորականության «ինքնօրէն անձնահաճ կամապաշտութեամբ», ծուլությամբ, մեղսասիրությամբ և հայ ժողովրդի թշվառությամբ ու ժամանակի անհպատ պայմաններով։ Ցավով է արձանագրում, որ այդպես չէին հայ եկեղեցին և հոգևորականությունը անցյալում, «մինչեւ յաւերումն աշխարհի ի հիմանց»։

Կային, սակայն, Քեսունի կամ Շուղրի Կարմիր վանքում և Կիլիկիայի այլ մենաստաններում իսկական բարեպաշտ ու զարգացած կրոնավորներ, որոնց հետ միասին Շնորհալին աշխատում է բարձրացնել ողջ հոգևորականության պատիվն ու դերը հայ կյանքում, ինչպես այդ եղել էր անցյալում։

Շնորհալու «Ընդհանրական»-ը, «Ներսես կաթողիկոսի այս մեծ գրությունը որքան իր բովանդակությամբ շատ կարևոր պատմական փաստաթուղթ է,—գրում է մեծավաստակ գրականագետ Մ. Աբեղյանը,—նույնքան և արժեքավոր մի գրական երկ է։ Իբրև բանաստեղծի գործ՝ դա բնականաբար հորինված է գեղեցիկ ձևով, հեղինակին հատուկ հաճելի ոճով։ Մարդ այդ կարդալով՝ երբեմն հրապուրվում է նրա կարգավորյալ ու թեթև, միաժամանակ և հաճախ պատկերավոր մտածությամբ։ Նա միտքն արտահայտում է սովորաբար կարճ ասացվածքներով, հստակ ու սրտալի խոսքերով, խուսափելով բառերի և քերականական ձևերի կրկնությունից։ Չի մոռանում իր աստիճանին պատշաճ խրատական եղանակը. զրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր. ոչ հրամայողաբար, ոչ ինքնագով մեծամտությամբ, այլ համեստաբար,

իրեն էլ ոչ արդար համարելով: Ոչ մի շինծու խոսք չկա. հանախ խոսում է մեկնաբան Շնորհալին: Գործածած նմանությունները մեծ մասամբ ոչ թե բանաստեղծական պանումանքի հատար են, այլ միտքն օրինակներով հեշտ հասկանալի և համոզիչ դարձնելու: Բայց դրանք միաժամանակ և առանձին համ ու հոտ են ընծայում նրա խոսքին: Այսպիսի դեպքերում երբեմն, ասացվածները բավական ընդարձակվում են միջանկյալ խոսքերով, բայց մեծ մասամբ չեն կորցնում իրենց հեշտ հասկանալիությունը, որովհետև հեղինակը չի մոռանում խոսքերի կապակցությունն ու մտածության թելը: Շատ բան, անշուշտ, ս. Գրքի և ուրիշ կրոնական գրվածքների խոսքերով և օրինակներով է համեմած, ինչ որ անհրաժեշտ էր ըստ ժամանակի պահանջի: Բայց պակաս չեն և իր սեփական գյուտերը, բնությունից և կենդանի իրական կյանքից առած, միշտ չմոռանալով, որ ինքը գրում է ոչ միայն խրատելու, այլև ուսուցանելու համար»:

Այժմ թող խոսի ս. Ներսես Շնորհալին:

Նրա հետևյալ հորդորներն ու հաստատումները ուսանելի են նաև այսօր, որպես հայրական, մշտական կոչ և հայրապետական պատգամ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՔԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԹԱՐԱՋԱՆԱՋԳԵՍՏ ԿՐՈՆԱՎՈՐՆԵՐԻՆ

Եվ արդ, նախ խոսենք ձեզ, վարքով և կենցաղով գերաշխարհիկ կրոնավորներ, որ բնակվում եք վանքերում և մենաստաններում: [Ձեզ], որ աշխարհի այունն եք և պարիսպ թշնամու դեմ՝ ձեր աղոթքներով և բարի վարքով, [ձեզ], որ մարմնավոր հրեշտակ եք և լուսատու աստղեր՝ երկրում, [ձեզ], որոնց բարի և լուսավոր վարքով միշտ փառավորվում է ձեր Հայրը, որ երկնքում է:

• • •

Խնդրում եմ բոլորիդ, սրբության և ողորմության յուղի նվազությամբ չաղոտեք ձեր հավատքի լապտերների լույսը, այլ ձեր անձերի մեջ մշտավառ առաքինությամբ անշեջ պահեցեք աստվածային ճառագայթները: Նյութականի սիրո պատճառով ձեր հոգիները մի՛ սառեցնեք Քրիստոսի սիրո հուրից, որ բերեց երկիր, և ուզում է մշտաբորբոք պահել: Ձեր սրտում տեղ մի տվեք օտար կրակի ցանկության, դրանով աղոթքներ և աստվածային պատարագի խորհուրդ խնկարկելու Աստծուն, ինչպես արեցին Ահարոնի որդիները՝ Նաբադը և Աբիուդը, այլ յուրաքանչյուրդ նախ թող խոստովանությամբ մաքրվի անմաքուր մտքերից ու գործերից և առաքինությամբ ինքնիրեն կենդանի պատարագ մատուցի կենդանի Աստծուն և, հետո միայն, թող մերձենա անարատին և սպասավորի սրբությունն սրբոցին, որպեսզի նրանց նման տանջող կրակով չայրվի ներքին մարդը այստեղ՝ խղճահարությամբ և այնտեղ՝ անշիջանելի բոցով:

• • •

Արդ, աստվածային և մեր հրամանով, սա թող դառնա կանոնական օրենք այնպիսիների համար՝ փոխելու այսուհետև իրենց բնակությունը վանքերում և իրենց վարքը, ըստ ձևի և կարգի, ապաշխարությամբ և պարկեշտությամբ մինչև մահ:

• • •

Ներկայումս շատ կրոնավորներ կան, որոնք աշխարհում ժառանգություն չունեին, հարկատու էին իշխաններին և աղքատ էին ունեցվածքով, նույնիսկ կարոտ՝ անհրաժեշտ բաների: Իսկ երբ կրոնավոր դարձան, վանքերում բազում ժառանգության տեր դարձան, հարստացան ունեցվածքով, և ոչ միայն անհրաժեշտ իրերի կարոտ չմնացին, այլև ավելորդ [բաներով] լցվեցին: Աշխարհում հոգսերով և աշխատանքով տանջվեցին, իսկ այստեղ անհոգությամբ և հեշտությամբ հարստացան:

• • •

Երբ այլևայլ վայրերից այդի ունեցող կրոնավորներ հանդիպում են իրար, ողջույնից հետո միմյանց ոչ թե հոգիների առողջության մասին են հարցնում և հիվանդության, ոչ էլ դևերի պատերազմների կամ խաղաղության մասին, ոչ էլ՝ թե ինչպես ստանանք արտասուքների շնորհքը աղոթքի պահին, այլ թե. «Այս տարի, ո՛վ եղբայր, ինչպե՞ս է քո տնկիների պտղաբերությունը, շա՞տ, թե քիչ»:

• • •

Որի պատճառով և մենք, այն կրոնավորների համար, որոնք նման են երկկենցաղ կենդանիներին, որովհետև ցամաքային են ըստ ձևի և ծովային՝ ծովի վրա զբաղմունքներ [ունենալու] պատճառով, աշխարհականներին հատուկ օրենքներ կհաստատենք և ոչ թե գերաշխարհիկների, որովհետև Քրիստոսի համար աղքատանալը ավելի բարձր է, քան հարստության տիրանալ և աղքատներին տալ Քրիստոսի հրամանի համաձայն, որքան Քրիստոս [ինքն] է մեծ քան նա, որ ողորմություն է տալիս աղքատին Քրիստոսի անունով:

• • •

Սա ևս ասենք, թե այն օրենքները, որոնք դրվեցին, որպեսզի կրոնավորները անինչ և անստացվածք լինեն, թեև աշխարհական գործերից ազատ լինելու և միայն հոգևոր գործերով պարապելու համար հաստատվեցին, բայց իսկական պատճառը այն է, որ կրոնավորը ոչ միայն ավելորդ կերակուրների, խմիչքների և զգեստների կարիքի մեջ լինի, այլև անհրաժեշտ իրերի, որպեսզի նա, որ զինվորագրվել էր մաքուր կուսության դեմ, կարողանա ցանկության պատերազմի հաղթող դառնալ: Որովհետև նյութի առավելությունը որովայնամոլությամբ փոխարինելը բավական է, որպեսզի ցանկության բոցը մեղքի մեջ գցի նրանց, ովքեր իրենց անձերը անխտիր մատնում են որկրամոլության և արբեցության, եթե նույնիսկ դևերը չեն գրգռում նրանց պոռնկության ախտերը:

• • •

Թող ձեր մեջ չգտնվի մեկը, որ կրոնավոր դարձած լինի և, ինքնիրեն տալով գինու առավելությանը, հարբածների [մասին] բամբասանքներին ենթարկի սուրբ կարգը, որովհետև մեկի անկարգությամբ իր բոլոր կարգակիցները կարհամարհվեն աշխարհականներից և այլազգիներից:

• • •

Իսկ մերոնց մոտ տեսնում ենք ոչ միայն գողություն, այլև ստախոսություն՝ գողության համար, ոչ միայն խոսքով, այլև մեծամեծ երդումներով ուրացում: Այս մեղքերին թողություն չկա:

* * *

Այս բոլորի հետ աղաչում եմ, աստվածաշունչ գրքերում գրված պատվիրանների համաձայն, դուներ և դռնապահներ դնել [ձեր] լեզվին և շրթունքներին, որպեսզի բարի և օգտակար խոսքերին թույլ տան դուրս գալ, իսկ չարերը, վնասակարները ու անօգուտները արգելափակեն սրտում, ինչպես բանտում։

* * *

Մասնավորելով խոսքս ամենամաքուր երամներիդ, ասում եմ, որ ձեր մտքերը, խոսքերն ու գործերը, հոգու և մարմնի բոլոր շարժումները այնպես պարկեշտ և աստվածավայելուչ թող լինեն, որ ոչ թե Աստծու անունը և [ձեր] կրոնավորական կարգը հայհոյելու և պարսավելու առիթ լինեն տեսնողների և լսողների համար, այլ գովասանքի և փառավորման։

ՎԱՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Այսպես, և եկեղեցու առաջնորդներից նա, որ երկու աչքերով է լուսավորված, այսինքն աստվածաշունչ գրքերի գիտությամբ և առաքինաւոր գործերով՝ ամբծությամբ, արբությամբ և ամեն արդարությամբ, որ ուսուցանում են Աստծու պատվիրանները, ինչպես իր անձը, այնպես էլ ողջ ելբայրությունը բարվոք կառուցնորդի դեպի աստվածային գործերը։ Իսկ նա, ով աչքերից մեկը բաց ունի և մյուսը՝ փակ, այսինքն, ով կա՛մ գիտություն ունի առանց առաքինի գործերի և կա՛մ պրաքինություն՝ առանց գիտության, թերի է բարիներից և ոչ կատարյալ, որովհետև այդպիսին միականիների նման է։

Քանզի թեև նա, ով իմաստություն ունի, գիտի խոսքով ճիշտ ուսուցանել արդարության ճանապարհի շավիղները, բայց քանի որ ինքը գործով չի գնում նույն [ճանապարհով], չի կարող և ուրիշներին համոզել գնալ։ Նույնպես և նա, ով վարքի մաքրություն ունի առանց գրքերի գիտության, թեև անձամբ գնում է Աստծու օրենքների ճանապարհով, բայց ուրիշներին չի կարող իմաստությամբ առաջնորդել ինչպես պետք է։ Այդ պատճառով էլ բազում անկարգություններ են մտնում եկեղեցի։

* * *

Կողմնակալությամբ ոմանց առանձնացնելով չսիրել և ուրիշներին անտեսել, ոմանց կարիքները ավելով գոհացնել, իսկ ուրիշներին նույնիսկ անհրաժեշտից զրկել, այլ սերը թող հասարակաց լինի, ինչպես սուրբ Բարսեղի կանոնադրության մեջ, իսկ պատիվը [տրվի] նրանց, ում վայել է։

* * *

Ոչ ոք ինքնակամ ախտից շարժվելով, ավագներին կաշառելով թող չընհատշտակի վանքերի առաջնորդությունը, առանց ժամանակի առաջնորդի քննության և հրամանի։

* * *

Բոլոր բարի գործերի տիպարներն ու տեսակները, որ մի անգամ կանոն են դարձել և հաստատվել սուրբ հայրերի խոսքերում՝ որպես խրատ և ուղղություն առաջնորդներին՝ խոսքի և գործի բարեձևության համար, շտապեցեք, որդեգրել ձեր անձերի մեջ։ Իսկ եթե չեք կարող բոլորը կատարել, որովհետև ձմեռ իջավ բարի ժամանակում, գոնե շատերը գործով կատարեցեք և պա-

կասի համար կամքի հոժարություն ցուցաբերեք, իսկ թերացման համար՝ զղջում և տրտմություն:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՅՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՆ ԵՎ ԿՈՉՎՈՒՄ ԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ

Խոսենք նաև սուրբ եպիսկոպոսներիդ, որ տեսուչ եք կարգված աշխարհում գտնվող բոլոր հավատացյալ հոգիների վրա: Թեև ըստ կարգի երկրորդ դասեցինք ձեզ, նախ վանականներին [խոսելով] պատշաճության համար, սակայն ըստ աստիճանի, առաջինն եք: Աղաչում եմ, ամեն ինչից առաջ հիշել և իմաստությամբ գիտակցել ձեր ունեցած աստիճանի բարձրությունն ու գործը՝ թե որտեղից սկսեց, ինչո՞ւ հաստատվեց և ինչ հրամայեցին անել նրանք, որ հաստատեցին այն: Որովհետև երբ մեկը իմանա այս բոլորը, ինչպես պարտ է իմանալ, այս երեքից մեկը կշահի: Կամ կճանաչի եպիսկոպոսության ծանրությունն ու դժվարությունը և իր տկարությունը իմանալով հոժարությամբ չի դիմի [այս կարգին], ինչպես դյուրին և հեշտալի գործի, այլ կհրաժարվի, եթե [նույնիսկ] բռնադատվի իր ախտալի մտքերից կամ մերձավորների կողմից, ինչպես առաջին սրբերը արեցին և ուսուցին: Կամ հանձն առնելով դառնալ, կիմաստ ըստ Աստծու հաճության կատարել տընտեսության գործը: Կամ արժանին չկատարելով կգիտակցի իր մեջ եղած բարու պակասը և [սրա] վնասը, խղճմտանքով կդատի իր անձը և ինքնիրեն հանցավոր կհամարի:

* * *

Պետք է իմանալ և այն, թե ինչո՞ւ Քրիստոսի և Նրա առաքյալների կողմից հաստատվեց եպիսկոպոսության գործը: Պարզ է, որպեսզի հրամանատար և գլուխ լինեն քահանաներին և ժողովրդին, մշտարթուն դետի Նման մտքի աչքերով հսկեն բոլորին, շեղվածներին ուղղեն և ուղիղներին հաստատ պահեն իրենց ուղղության մեջ:

Իսկ թե ինչ հրամայվեց եպիսկոպոսին լինել և կամ ինչ անել, Պողոսը պարզաբանում է Տիմոթեոսին գրելով, որ եպիսկոպոսը, որպես Աստծու տնտես, պետք է անարատ լինի, հեզ, խոնարհ, պարկեշտ, հյուրասեր, արդար, սուրբ, ժուժկալ, ոչ արծաթասեր, ոչ կռվող և ոչ հարվածող, այլ հանդարտ: Ավելացնում է և այս. պետք է վերակացու լինել Բանի վարդապետման, այսինքն ուսանել, ճանաչել և սպասավորել աստվածային օրենքների քարոզության: Նախ ա՛յս գործը ստանձնել և հետո [միայն] նյութականով մտահոգվել, ինչպես առաքյալները արեցին և ուսուցին:

* * *

Այս է, որ եպիսկոպոսներին հրամայում է, թե պետք է վերակացու լինել Բանի քարոզության և մխիթարել ողջմիտներին՝ նրանց, որոնք հավատքի հիվանդություն չունեն: Ով ընդունում է առաքելական Աթոռը, պետք է և առաքյալների գործը ստանձնի, ինչպես եղան նրանց հետևող առաջին սուրբ հայրերը:

* * *

Արդ, առաքյալների դասը, որոնք առաջինը Քրիստոսից ընդունեցին եպիսկոպոսության գործը, այսպես արեցին իրենք և սովորեցրին իրենց հե-

տեվողներին նույնօրինակ վարվել: Իսկ այս թշվառ ժամանակում այնքան հեռացանք նրանց բարությանը նմանվելուց, մինչև որ նրանք, ովքեր հոժարում են ստանձնել այդ գործը, եպիսկոպոսության գոյության պատճառը այլ բան չեն կարծում, քան միայն զանազան հնարներով հարստություն ժողովել հնազանդյալներից և փառավորիչներից փառք որսալ, որ պետք է անարգանք համարել և ոչ թե փառք:

* * *

Չեմ շարունակի թվել այս ժամանակի եպիսկոպոսների ավելի դժնդակ գործերը, որով բազում անարգանքների և տույժերի են ենթարկվում այլազգիներից: [Եվ այդ] ոչ թե աստվածային օրենքների համար, ինչպես առաջին արքերը, որովհետև այն երանության է արժանի, այլ սնոտի փառքերի հույսի պատճառով, որովհետև հավատացյալներից զանազան հնարներով և բռնությամբ կողոպտվածը, որ պետք է ծառայեր եկեղեցու պայծառության և աղքատների կարիքներին, հավաքում են, ինչպես մաքսավորները, և աշխարհի բռնակալներին են նվիրում:

Իսկ դուք, որ ճշմարտության ջատագովներ եք և նույն բարի [գործերին] հետևող, խնդրում ենք, ամեն ինչով պատրաստ եղեք հոգևոր հովվության գործին, որ ընդունեցիք ճշմարիտ հովվապետից, բոլոր զգայարանների ըստ վերոգրյալ ցուցմունքների և ըստ սուրբ առաքյալների և նրանց հետևողների կանոնական իրատին:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԴԱՍԻՆ

Այժմ խոսքի կարգը դարձնենք քահանաների դասին, որ աստիճանով երկրորդն եք եպիսկոպոսներից հետո: Դուք նշանակված եք քահանայական գործունեությամբ բոլոր որդիներին Աստծուն նվիրելու համար՝ սուրբ ավազանի մկրտությամբ բոլորին ծնունդ տալով, նրանց երկնավոր Հոր որդեգիրներ և Քրիստոս Աստծու ժառանգակիցներ դարձնելու համար և Տիրոջ մեղսաքավիչ մարմնի և արյան բաշխումով կերակրել նրանց հոգին անմահության համար:

Եվ արդ, աղաչում եմ բոլորիդ, Քրիստոսի սիրով բացել [ձեր] մտքերի աչքերը, արթնանալ այս կյանքի մահահրավեր թմբիրից և ճանաչել զորությունը երկնային այն գործի, որին հրավիրվելով կանչվեցիք: Հրեշտակական գերաշխարհիկ զորություններից գերիվեր է այս աստիճանը նրանց համար, որոնք անարատությամբ և սրբությամբ են վարում այն:

Եվ որովհետև արժանի եղաք ձեր անձերը ընծայաբերելու երկնային գործին, ոչնչով առիթ մի տվեք, որ արատ ընկնի ձեր պաշտոնի վրա, ինչպես առաքյալն է խրատում: Այլ արիաբար և հոժարամիտ սրտով, առանց ծուլության, սուրբ հայրերի յուրաքանչյուր ժամի համար սահմանած աղոթքները անթերի կատարեցեք: Եվ մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հավատով, մեծ հույսով, վճիտ մտքերով և կատարյալ սիրով, երկյուղով և դողով սպասավորեցեք աստվածային խորհուրդներին: Առանց հասկանալու մի անցնեք ձեր մատուցած աղոթքների բազմախորհուրդ խոսքերը, ինչպես ջուրն է անցնում խողովակով, լինեն դրանք սաղմոսերգություն կամ սուրբ Գրոց ընթերցում, պաշտոներգություն և կամ քահանայական աղոթք՝ սուրբ պատարագի կամ ուրիշ հաստատված կանոնների, այլ առավելապես հասկանալով և, եթե հնար լինի, արտասուքներով և մեծ երկյուղով, որպես թե

դուք եք Տիրոջապես բխեցնում դրանք ձեր սրտից և մտքերից, որովհետև այդ բոլորը Աստծուն ուղղված և նրանից մեզ տրված զանազան և պես-պես բարիքների և պարգևների խնդրանքներն են: Իսկ ինքը, բարիքների պարգևատու Աստված, երբ տեսնում է խնդրողի ջերմեռանդ պաղատանքները, ավելի առատապես է շնորհում խնդրելին, ըստ այն խոսքի, թե՝ ով խնդրի, կստանա:

* * *

Իմացեք և այս, որ ձեր քահանայական կոչումը մարդկանցից [տրված] չէ և ոչ էլ մարդու ձեռքով, այլ նրանից, որ քահանա կոչվեց ըստ Մելքիսեդեկի կարգի, որ և ինքն է ճշմարիտ քահանան, քահանայապետը և Հայր Աստծուն [ընծայված] Պատարագը: Նա ձեզ տվեց իր անվան կոչումը, իր անվան հետ հանձնարարեց և իր գործը՝ հովվել իր ժողովրդին՝ միշտ բարի գործեր ուսուցանել և իր անձը բոլորին բարի օրինակ տալ:

Այդ պատճառով խնդրում ենք, որ կոչման անվան հետ և գործը կատարեք, որպես ձեր ժողովրդի հայրերն ու ծնողները, ամեն ժամ հոգևոր խրատներ տվեք նրանց միշտ ուսուցանելով՝ եկեղեցում, հրապարակներում և տանը, յուրաքանչյուրին ըստ հասակի զգուշացնելով և աստվածային հորդորելով:

* * *

Եթե նույնիսկ բոլոր տեսակի բարիքներով և առաքինությամբ կատարյալ լինեք, եկեղեցու պայծառության և սուրբ պատարագի պատվական և մաքուր զգեստների հանդեպ անփույթ մի եղեք, ինչպես լսում ենք ոմանց մասին, թե ընդհանուր զգեստներով և անմաքուր տրեխներով են բարձրանում սուրբ բեմ և սքանչելի խորհուրդը կատարում են խորհուրդ չունեցող զգեստներով:

* * *

Արդ աղաչում եմ, երկնային խորհուրդը մի կատարեք ինչպես մարմնական մի գործ, այլ երկյուղով և դողով սպասավորեցեք աստվածային [գործին], որովհետև եթե [Հին Կտակարանի] օրինակում սուրբ հրեշտակը ունելիի կարիք էր զգում սեղանի վրայի կայծերին մոտենալիս, որքան մաքրություն և զգուշություն է պետք մեզ՝ հողեղեններիս և մեղավորներիս, այդ օրինակի ճշմարտությանը մոտենալու համար:

* * *

Եվ չպատահի այնպես, ինչպես լսեցինք [Աստծու] երկյուղը չունեցող որոշ քահանաների մասին, որոնք բնակվում են քաղաքներում, որ նրանք առավոտից մինչև պատարագի ժամը շրջում են քաղաքի վաճառատեղերում առևտրի համար, որտեղ բազմաթիվ նետեր խոցում են [նրանց] սրտերը զգայարանների ճամփով՝ անպատշաճ բաներ տեսնելով, լսելով, խոսելով և գործելով, և այնտեղից դառնալով հանդգնում են մտնել եկեղեցիները և պատարագ են մատուցում ուրիշ քահանաների պատրաստած նշխարներով, առանց սաղմոսների և աղոթքների:

Պատարագող քահանաներից ոչ ոք, ուրիշի դեմ ոխ ունենալով սրտում, թող չմոտենա աստվածային խորհուրդը կատարելու և [դրանով] անընդունելի դարձնի պատարագը Աստծու առաջ, այլ նախ, ըստ Քրիստոսի հրամանի, թող հաշտվի եղբոր հետ և հետո գա ու պատարագ մատուցի:

• • •

Իսկ ձեզանից նրանք, որ ավագագույն են և իմաստությամբ հաստատուն, թող սիրաշահեն կրտսերագույններին և պակասամիտներին, ներող և համբերատար լինեն նրանց նկատմամբ, և [դուք] կվարձատրվեք Աստծուց, եղբայրներին սիրաշահելու համար: Իսկ կրտսերագույններիդ պատվիրում ենք խոնարհություն և հնազանդություն ցույց տալ ավելի ավագներին և իմաստուն քահանաներին:

• • •

Ձեզանից ոչ ոք թող չսիրի քահանայական ուսմանց տգիտության կուրությունը, ծուլության և աշխարհիկ զբաղումների պատճառով: Թեև ոչ բոլորը կարող են կատարյալ լինել այն բոլոր շնորհներով, որ քահանաներից պահանջում են աստվածային օրենքները, սակայն [գոնե] հարկավորների մեջ պետք է անթերի լինեն, այինքն եկեղեցական գրքերը ուղիղ ընթերցեն, հայնավորների մանր ուսմունքը սովորեն եկեղեցում և հետո գան քահանայական ձեռնադրության:

• • •

Բայց լսում ենք որոշ սուտ քահանաների մասին, որ ոչ միայն այլ ուսումից են տգետ ծուլության պատճառով, մանավանդ անհավատության պատճառով, այլև Դավթի սաղմոսը ամբողջությամբ չգիտեն, առանց որի հարյուր և հիսուն փոխերով անգիր խոսելով Աստծու հետ, պատարագ չի մատուցվի սուրբ հայրերի հաստատած կանոնի ավանդության համաձայն: Ոմանք սուրբ պատարագի աղոթքների խոսքերն անգամ անգիր չգիտեն և կարծում են, որ կեղծ պատարագով խաբում են անխաբելի Աստծուն, մարդկանց և ննջեցյալների հոգիներին, մարդկանց աչքին կեղծելով: Սրանց դատաստանը Աստծու առաջ առավել ծանր է, քան բոլոր մեղքերի [դատաստանը]:

• • •

Եվ ձեզանից ոչ մեկը, որպես տուրք, թող անգին շնորհի դիմաց արծաթագին չպահանջի մկրտություն կատարելու կամ մահամերձին հաղորդություն տալու համար, այլ [նրանցից], որ ունեն և սիրով են տալիս իրրև եկեղեցու նվեր, առեք, իսկ եթե աղքատ լինեն, մի բռնադատեք:

Աշխարհաբարի վերածեց
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ
Հոգևոր ճեմարանի գրաբար լեզվի դասախոս

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ Ս. ՂԵՎ ՈՆԴՑԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՏՈՆԻՆ ՄԱՄՆԱԿԻՑ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՆՈՎ

Ս. ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայաստանյայց եկեղեցում ամեն տարի, Վարդանանց տոնից առաջ, նշվում է սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնը:

Հայոց պատմության անկյունադարձային կետն ու ամենանշանակալից դեպքն է 451 թվականին Վարդանանց հերոսամարտը և ս. Ղևոնդյանց քահանայից նահատակությունը՝ 454 թվականին:

Հայ եկեղեցին 16 դարեր շարունակ ոգեկոչում է հիշատակը Ղևոնդյանց սուրբ նահատակների, որոնք հայրենիքի անկախության և Հայոց աշխարհի խաղաղության համար մարտնչող հայրենասեր նախարարների ու «աշխարհազոր» հայագնդի կողքին հավասարապես մարտնչեցին՝ առաջնորդելով մեր ժողովրդին «Վասն հայրենեաց, վասն Յիսուսի» նրա օրհնյալ, ազատագրական պայքարում: «Քահանայք պատուեալք օծմամբ հոգւոյն նախակարգեալք յառաջնորդութիւն» (Շարակնոց, Վաղարշապատ, 1888, էջ 436):

Ս. Ղևոնդյանց տոնակատարությունը հայ եկեղեցիներում սրտագին առիթ է ընձեռում հայ հոգևորականներին ամեն տարի հանուն աշխարհի խաղաղության միատեղ աղոթելու և մի անգամ ևս անդրադառնալու անցյալի իրենց մտատիպար, անձնազոհ ու հայրենանվեր հոգևորականների կյանքին, վերանորոգվելու ու լիցքավորվելու նրանցով և ավելի սիրով ու զոհողությամբ ծառայելու մեր եկեղեցուն, հայրենիքին և խաղաղության սուրբ գործին. «Դադարեցէք ի չարեաց ձերոց և ուսարուք զբարիս գործել» (Եսայի Ա 16):

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռում առավել ևս հանդիսավորությամբ նշվեց սրբոց Ղևոնդյանց տոնը՝ հանուն խաղաղության համատեղ աղոթքներով և դասախոսություններով:

Հանդիսություններին ավելի փայլ ու նշանակություն տալու և ավելի կազմակերպված անցկացնելու համար Մայր Աթոռում կազմվել էր հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Տ. Հուսիկ եպս. Սանթուրյան՝ նախագահ
Տ. Բագրատ աբդ. Գալստյան՝ անդամ
Տ. Հակոբ քհն. Գյոկչյան՝ քարտուղար:

Փետրվարի 18-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռ ժամանեցին ներքին թեմերի սրբազան առաջնորդները, վարդապետներ և քահանա հայրեր:

Հանդիսություններին մասնակցեցին՝ բացի Մայր Աթոռի միաբաններից.

Արարատյան թեմից՝

Առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան.

Քահանա հայրեր՝

Տ. Ռուբեն ավագ քհն. Մարտիրոսյան
Տ. Սարգիս քհն. Թաշչյան
Տ. Աբրահամ քհն. Մարգարյան
Տ. Նշան քհն. Հանեյան
Տ. Գալուստ քհն. Քեքլիկյան
Տ. Ղևոնդ քհն. Սոմունջյան
Տ. Հարություն քհն. Մարկոսյան
Տ. Գրիգոր քհն. Զաքֆյան
Տ. Վազգեն քհն. Ամատունի
Տ. Վարդան քհն. Քեշիշյան
Տ. Եղիշե քհն. Աբրահամյան
Տ. Կարապետ քհն. Հովնանյան:

Շիրակի թեմից՝

Առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյան.

Քահանա հայրեր՝

Տ. Արամ ավագ քհն. Բոյաջյան
Տ. Նորայր ավագ քահանա Սարգսյան
Տ. Կարապետ քհն. Քելամյան
Տ. Հայկազուն քհն. Գյոնջյան
Տ. Սուրեն քհն. Ծատուրյան
Տ. Զավեն քհն. Մոսկովյան
Տ. Սամվել քհն. Համբարձյան:

Վրաստանի թեմից՝

Առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյան.

Քահանա հայրեր՝

Տ. Տաթև քհն. Հարությունյան
Տ. Եղիշե քհն. Հարությունյան
Տ. Համբարձում քհն. Մելքոնյան

Տ. Հովհաննես քհն. Դանիելյան
Տ. Գրիգոր քհն. Իլխազյան:
Ադրբեջանի թեմից՝
Առաջնորդ տ. Վահան եպս. Տերյան.
Քահանա հայրերից՝
Տ. Ղուկաս քհն. Հակոբյան:
Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմից՝
Առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյան.
Քահանա հայրեր՝
Տ. Ղևոնդ քհն. Աղաջանյան
Տ. Գրիգոր քհն. Տերտերյան
Տ. Գրիգոր քհն. Անանյան:

Սրբոց Ղևոնդյանց տոնի առիթով ս. Էջմիածին էին ժամանել նաև Մայր Աթոռի միաբաններ. Վիեննայից՝ տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը, Սոֆիայից՝ տ. Մեսրոպ քհն. Բենլիյանը, Լոնդոնից՝ Վրեժ սրկ. Ներսիսյանը: Հանդիսություններին ներկա էր նաև Իրաքից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բասրայի հայոց հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը:

Փետրվարի 18-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, Մայր տաճարում տեղի ունեցավ ս. Ղևոնդյանց նախատոնակը, որի ավարտին տ. Արամ ավագ քհն. Բոյաջյանը քարոզեց «Ս. Ղևոնդեանք» բնաբանով: Ժամերգությունից հետո բոլոր հոգևոր հայրերը հավաքվեցին հոգևոր ճեմարանի սրահում, ուր, հանուն Հայոց Հայրապետի, ողջույնի խոսք ասաց հանձնաժողովի նախագահ և Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը: «Օրվա խորհուրդը» թեմայով բանախոսեց տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը, որը շատ հակիրճ ու գեղեցիկ կերպով ներկայացրեց ս. Ղևոնդյանց վարքն ու ընդանց՝ հանուն հայրենյաց ու հավատքի նահատակության պատմությունը: Ապա բանախոսեց հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, որը հանգամանորեն և փաստական տվյալներով ներկայացրեց «Հայ եկեղեցին Միացյալ Նահանգներում այսօր» թեման՝ կանգ առնելով Մայր Աթոռի օրհնության և հովանու ներքո ամերիկահայ գաղութի և թեմի ստեղծման պատմության, եկեղեցական, ազգային ու մշակութային կազմակերպությունների և եկեղեցիների ներկա վիճակի վրա:

Փետրվարի 19-ին, երեքշաբթի օրը, սրբոց Ղևոնդյանց տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Տաթև քհն. Հարությունյանը: «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով քարոզեց տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը: Պատարագից հետո ներկա բոլոր սրբազան ու քահանա հայրերը և Մայր Աթոռի միաբանությունը կրկին հավաքվեցին հոգևոր ճեմարանի հանդիսասրահում:

«Խաղաղության պայքարը և հայ եկեղեցին» թեմայով բանախոսեց տ. Բագրատ աբդ. Գալստյանը, որը նշեց մեր օրերում, 1948 թվականից ի վեր, մասնավորաբար հայ եկեղեցու խաղաղության համար կատարած գործունեությունը լուսահոգի Տ. Տ. Հևորգ Զ-ի և մանավանդ խաղաղության ջերմ պաշտպան ազգիս Վեհափառ Հայրապետի՝ այդ ուղղությամբ կատարած շնորհակալ մեծ աշխատանքը:

«Հայ հոգևորականության դերը մեր կյանքում» թեմայով բանախոսեց տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը, որը նշեց այն կարևոր խնդիրների ու պարտականությունների մասին, որոնք դրվում են հայ քահանայի ուսերին՝ այսօր թե՛ հավատքը զորացնելու և թե՛ հային հայ պահելու ուղղությամբ:

Օրվա առաջին կեսի բանախոսությունները եզրափակեց Մայր Աթոռի հյուր տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը, որը խոսեց «Հայ եկեղեցին Իրաքում» թեմայի մասին: Նա մանրամասնորեն ներկայացրեց Իրաքի հայ գաղութի ներկա վիճակը իր եկեղեցիներով, դպրոցներով, մշակութային, ազգային կյանքով:

Ժամը 17-ին Մայր տաճարում տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն, հսկում և համատեղ աղոթք՝ «Վասն խաղաղության ամենայն աշխարհի»: Աղոթքին ներկա էր Վեհափառ Հայրապետը: «Խաղաղութիւն թողում ձեզ» բնաբանով քարոզեց տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը, որը շեշտեց խաղաղության անհրաժեշտությունը մարդու հոգեկան ներքնաշխարհի և ընկերային փոխհարաբերությունների մեջ. «...Խաղաղութեամբ մենք մեր մեջ գտնում ենք անդորրություն, համերաշխություն և ներդաշնակություն շրջապատի մարդկանց և աշխարհի հետ»: Արարողության վերջում Վեհափառ Հայրապետը խոսեց խաղաղության կարևորության մասին, մարդկանց ու պետությունների փոխհարաբերությունների բնագավառներում. «Այսօր համայն մարդկության առջև ծառանում են ծանրակշիռ հարցեր, ինչպիսիք են պատերազմի օջախների խափանման, պետությունների խաղաղ գոյակցության, ճնշված ազգությունների ազատագրման, ընկերային անարդարության և ցեղային խտրականության վերացման հրամայականները: Եկեղեցիները, և հայ եկեղեցին նույնպես, ուր էլ որ գտնվեն դրանք, իրենց հանապազօրյա գործունեությամբ պետք է նպաստեն խաղաղության հաստատմանն ու հարատևությանը: Խաղաղություն և համերաշխություն հայ ժողովրդին, «խաղաղութիւն ամենեցուն». «...Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս և զսուինս իւրեանց ի մանգաղս, ոչ առնցու ազգ յազգի վերայ սուր և ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ» (Եսայի Բ 4):

Երեկոյան առաջնորդ սրբազանները, քահանա հայրերը և Մայր Աթոռի միաբանությունը կրկին հավաքվեցին հոգևոր ճեմարանի հանդիսասրահում:

Հոգևոր ճեմարանի տեսչության թույլտրվությամբ հավաքույթներին մասնակցում էին նաև ճեմարանի ավարտական՝ Գ լսարանի սարկավագները:

«Հոգևորականի կարգապահությունը» թեմայով բանախոսեց տ. Ղևոնդ քհն. Աղաջանյանը և նշեց. «Օրինակելի, կարգապահ և կատարյալ հոգևորական լինելու առաջին և կարևոր պայմանն է՝ ճիշտ և համոզված կերպով ըմբռնել, առանց երկմտության, բարոյախոսության և դաստիարակության աղբյուր հանդիսացող Քրիստոսի Ավետարանը...: Հոգևորականի կարգապահության կենդանի օրինակն ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսն է»: Տ. Սարգիս քհն. Թաշչյանը խոսեց «Քահանայի ընկերական կոչման» մասին. «Քահանայությունը եկեղեցական կարգի էական, հիմնական և պատասխանատու պաշտոնն է, ըստ որում եկեղեցու սպասավոր դառնալ կամեցողը քահանայության պարտքը և որպիսությունը պետք է լավ քննի ու ճանաչի նախապես յուր անձի կարողության հետ չափելով»:

«Եվ այս է կարգն,—ասել է Տաթևացին,— նախ մաքրելն և ապա լուսաւորելն ու կատարելագործելն...., նոյնպէս և որք լուսաւորեն, պարտք է լինել լոյս և ապա լուսաւորել...»:

Նույն օրը, երեկոյան, բանախոսությամբ հանդես եկավ նաև տ. Հակոբ քհն. Գյոկչյանը՝ խոսելով նաև մեր օրերին Մայր Աթոռ ս. Էջմիածնի առաքելության մասին: Նա ներկայացրեց Մայր Աթոռի վերջին տարիների գործունեությունը և հայ եկեղեցու դերը մեր ժողովրդի կյանքում ու շեշտեց. «Հայ ժողովրդի՝ եկեղեցու հետ ունեցած և Մայր Աթոռի և մեր բոլոր Աթոռների ու թեմերի կապի ու փոխհարաբերության մեջ է արտահայտվում հայ եկեղեցու միությունը և մեր ժողովրդի ազգային ու եկեղեցական միասնությունը»:

Փետրվարի 20-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, ժամերգությունից հետո, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում կազմակերպվեց հարցազրույց՝ քահանա հայրերին հետաքրքրող մի շարք այժմեական հարցերի վերաբերյալ: Հարցազրույցին նախագահում էին տ. Պարգև եպս. Գևորգյանը, տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Արսեն եպս. Բերբերյանը, տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը, քարտուղարությամբ տ. Արամ քհն. Բոյաջյանի, տ. Մեսրոպ քհն. Բեղլիյանի և տ. Հակոբ քհն. Գյոկչյանի: Այդ առթիվ կազմվեց արձանագրություն՝ Վեհափառ Հայրապետի բարձր ուշադրությանը հանձնելու համար մի շարք կազմակերպչական, եկեղեցական հարցեր:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել սուրբ Ղևոնդյանց տոնի առիթով Մայր Աթոռ ժամանած առաջնորդ սրբազաններին, վարդապետներին և քահանա հայրերին՝ տալու համար Իր հայրական օրհնությունն ու քահանայապետական պատգամը: Վեհափառ Հայրապետը նախ ողջունեց և ապա շնորհավորեց ներկաներին ս. Ղևոնդյանց տոնի առիթով և, Իր խոսքն ուղղելով հայ եկեղեցու ողջ հոգևորականությանը, մի անգամ ևս շեշտեց, որ այսօր էլ հայ եկեղեցին կատարում է իր ընկերական առաքելությունը, եկեղեցանվեր և հայրենաշեն գործունեությունը հայ ժողովրդի ծոցում, Հայաստանում և ի սփյուռս աշխարհի: Հայոց Հայրապետը թելադրեց քահանա հայրերին՝ լինել ծառայասեր, հավատավոր, կարգապահ հոգևորականներ, ինչպիսիք էին սուրբ Ղևոնդյանք: «Հայ հոգևորականությունը,— ասաց Վեհափառ Հայրապետը,—իր ետին ունի հոգևոր ծառայության անցյալի փառավոր ավանդություններ, որոնք ժառանգ են մնացել մեզ: Մեր հոգևոր հայրերը պատվով և արժանավորապես իրենց ուսերի վրա են կրել ու մեզ հասցրել հայ ժողովրդին ու մեր սուրբ եկեղեցուն անձնուրացորեն ծառայելու ու ընկերվելու սրբազան տապանակը»:

Իր պատգամի վերջում Վեհափառ Հայրապետը ներկաներին և հատկապես քահանա հայրերին մաղթեց սրբությամբ պահել այդ ավանդությունները՝ ազնիվ ու բարի ծառայությամբ:

Սրբոց Ղևոնդյանց տոնի առթիվ Մայր Աթոռում կազմակերպված միջոցառումները ավարտվում են Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելու համար բոլոր քահանա հայրերը համբուրում են Նորին Սրբության Աջը և որպես հիշատակ Մայր Աթոռից ստանում ընկերներ և ս. Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» ու Լ. Խաչերյանի «Գլաձորի համալսարանը» նոր հրատարակված գրքերը:

Հանձնաժողովի քարտուղար՝
Տ. ՀԱԿՈԲ ՔՀՆ. ԳՅՈԿՉՅԱՆ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՁՈՐԱՎԱՐԱՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Այս տարի Մայր Աթոռում բացառիկ հանդիսավորությամբ նշվեցին «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» տոնը և Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Փետրվարի 20-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, ավանդական շուքով Մայր տաճարում տեղի է ունենում Վարդանանց տոնի նախատոնակը:

Փետրվարի 21-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում պաշտվում է առավոտյան ժամերգությունը, իսկ ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը:

Ս. Վարդանանց տոնի առիթով հանդիսավոր ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի երգչախումբը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առջև օրվա խորհրդի մասին քարոզում է պատարագիչ հայր սուրբը՝ «Ո՞վ կարող է մեզ մեր հավատքից զրկել» (Եղիշե) բնաբանով, վեր հանելով Ավարայրի հերոսամարտի հոգևոր, հայրենասիրական նշանակությունը:

Այնուհետև հանդիսավորությամբ կատարվում է հայրապետական մաղթանքի կարգը:

Ս. պատարագից հետո Նորին Սրբությունն առաջնորդվում է Վեհարան: Վեհարանի ընդունասրահում, հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, պաշտոնեության և ողջ հայ հավատացյալ ժողովրդի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը և ցանկանում նրան երկար-երկար երջանիկ և արդյունավետ տարիներ՝ ի փառս Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցու ու Մայր Աթոռի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետն Իր գոհունակությունն է հայտնում Իր անվանակոչության տարեդարձի առթիվ արտասանված ջերմ բարեմաղթությունների համար և օրհնում բոլոր ներկաներին:

Ներկաներն աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի տոնը:

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԵՂ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ժամը 19-ին, առաջին անգամ լինելով, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում ս. Վարդանանց նվիրված հանդիսություն՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ներքին թեմերի առաջ-

նորդ սրբազանները, հոգևոր հովիվները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ ներկաներ՝ շուրջ 900 հոգի:

Հնչում է Հայաստանի պետական հիմնը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը երգում է ս. Վարդանանց հիշատակին նվիրված «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականները:

Բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

Օրվա գլխավոր բանախոսն է Մայր Աթոռի միաբան և «Էջմիածին» ամսագրի քարտուղար տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը, որը հանդես է գալիս գեղեցիկ և բովանդակալից հետևյալ բանախոսությամբ.

«ԱՎԱՐԱՅՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Երևույթներ կան, որոնք ժամանակով ու տարածությամբ չեն չափվում:

Երևույթներ կան, որոնք բնական ու բանական, նաև տրամաբանության բոլոր շրջանակներից դուրս են մնում:

Ահա այսպիսի երևույթներից մեկն է Ավարայրը:

Ավարայրից առաջ և հետո հայ ժողովուրդը բազմաթիվ անգամ է մարտնչել, կանգնել անդունդի եզրին, մահվան դեմ առ դեմ, իր հոգևոր մշակութային արժեքները ձեռքին, ոտաբոբիկ և լքված բոլորի կողմից, և հետո իր ներքին հոգեկան ուժով փյունիկի պես հարություն առել:

Սակայն այս ամենի միջից, իբրև խորհուրդը այս ամենի, իբրև հուշարձանը հայ ժողովրդի հայրենասիրության և իր հոգևոր արժեքների գնահատման, իբրև լուսե խորան, դեպի երկինք է ձգվում Ավարայրի հերոսամարտը:

Ավարայրի ճակատամարտը, կամ Վարդանանց պատերազմն, անշուշտ, ունեցել է իր տնտեսական ու քաղաքական շարժառիթները, որոնք բավականին մանրամասն շարադրված են Եղիշեի և Փարպեցու պատմությունների մեջ:

428 թվականին, թագավորական իշխանության հետ ներքին երկպառակության մեջ եղած, ինքնագլուխ հայ նախարարների անհեռատես քայլով վերանում է նաև Մեծ Հայքի կիսանկախ Հայկական թագավորությունը, և երկիրը սկսում է կառավարվել պարսիկ կամ հայ մարզպաններով: Երկրի ներքին կառուցվածքը և կյանքը ոչ մի փոփոխության չի ենթարկվում: Մամիկոնյանները մնում են սպարապետներ, Ամատունիները՝ հազարապետներ, հոգևորականները՝ դատավորներ, իսկ «աստուածապաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երեւելի լինէր յաշխարհին հայոց»:

Պարսկական կառավարությունը բավարարվում է միայն որոշակի հարկեր վերցնելով:

Այս դրությունը փոխվում է, երբ Պարսկաստանում իշխանության գլուխ է անցնում ռազմատենչ ազնվականության ներկայացուցիչ Միհրներսեհ հազարապետը, որի քաղաքականությունը առիթ ծառայեց Վարդանանց պատերազմի համար: Այսպես, Ղազար Փարպեցու պատմության մեջ պահվում է նրա խոսքը՝ ուղղված պարսից շահնշահ Հազկերտ Բ-ին.

«Արդ, քանի՞ երկրներ կան, որոնց վրա դուք աստվածաբար իշխում եք, որոնց կարող եք սպանել կամ ապրեցնել: Նախ և առաջ Մեծ Հայոց երկիրը, որ շատ պիտանի և օգտակար է և նրան կից վրաց և աղվանից երկրները... Դուք ինքներդ և բոլոր արիները գիտեն, թե ինչպես մեծ ու պիտանի երկիր է Հայոց աշխարհը, բայց մոտ է ու սահմանակից կայսեր իշխանությանը և միևնույն օրենքն ու պաշտամունքի ձևերն ունի, որի համար կայսրը նրանց վրա ազդեցություն ունի: Եվ եթե մեր կրոնին դարձնենք նրանց.... ուղիղ ճանապարհի կգան, և այնուհետև կսիրեն մեզ և Արյաց աշխարհը, և կայսրից, նրա կրոնից ու երկրից կբեռնանան: Եվ եթե հայերը սրտանց մերը լինեն, վրացիներն ու աղվանները մերն են ու մերը»:

Միհրներսեհի այս մտածումները Հազկերտին մղում են կույր ատելության, ազգայնամոլ ձգտումների, մանավանդ կրոնական մոլեռանդության:

Միհրներսեհի ծրագիրը իրականություն դառնալու համար Հայաստանը ծանր հարկահանությունների հետևանքով ենթարկվում է կեղեքումների: Պարսից կառավարությունը երկպառակություն է գցում հայ նախարարների միջև և նրանց բաժանում երկու հոսանքների՝ պարսկամոլների և ազգասերների: Հայ նախարարների և հոգևորականության ձեռքից խլում է նրանց ավանդական պաշտոններն ու իրավունքները և դրանք հանձնում պարսիկ դրածոների:

Եվ ահա, այս ամենից հետո, պարսից կառավարությունը 449 թ. Հայաստան է ուղարկում կրոնափոխության առաջարկ-հրովարտակը: Հայ ժողովրդի համար այս այլևս ընդունելի չէր, և նույն թվականին Աշտիշատում գումարված հայ նախարարների և հոգևորականների միացյալ ժողովը մերժում է կրոնափոխության մասին պարսից կառավարության առաջարկը:

Զայրացած Հազկերտը արքունիք է կանչում հայ, վրացի և աղվան նախարարներին, ուր նրանց սպասում էր խիստ հարցաքննություն, հալածանք և մահապատիժ կամ ուրացում և, ավելի ճիշտ՝ կեղծուրացություն:



Քրիստոնյա նախարարները, վերադառնալով իրենց հայրենի երկրները, բացահայտում են իրենց իսկական դեմքը և պարզում ապստամբության դրոշը: Ահա այս վճռական պահին, անմիտ քաղաքականությամբ, շատ տխուր դեր է կատարում պարսկամոլ կուսակցությունը՝ Վասակ Սյունեցու գլխավորությամբ: Նրանց հաջողվում է հայ ապստամբներից անջատել վրացիներին, աղվաններին, հույներին ու հունահայերին և հայոց զորքերի սպարապետ Վարդան Մամիկոնյանին, 66.000 զորքով թողնել եռապատիկ անգամ թվով մեծ և սպառազինված պարսից բանակի դեմ: Փաստորեն նրանք դավաճանեցին հայկական դատին և պատճառ դարձան հայերի ֆիզիկական պարտությանը: Ավարայրը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի համար, և այն շատ մեծ հարված եղավ պարսկական կառավարությանը, որի համար մեծապես ցավեց Հազկերտ Բ շահնշահը:

Ավարայրին հաջորդեց պարտիզանական կռիվներ, մինչև Վահանյանց պատերազմը:

Ավարայրին հաջորդեց հայ քրիստոնեության հաղթանակը:

Հայոց պատմության մեջ առաջին անգամ ժողովրդի բոլոր դասերը՝ հոգևորականներ, նախարարներ, շինականներ, միասիրտ ու միակամ, գնում են մահվան ընդառաջ, դեպի հերոսացում:

Մեր պատմության սկիզբը՝ աշխարհի սկիզբն էր:

Իսկ Ավարայրը, որը գուցե վերջ լիներ մեզ համար, դարձավ մի նոր սկիզբ:

Մեր սկիզբը աշխարհի սկիզբն էր և սկսվել էր ահեղ հայկյան գոտեմարտով. մեր առաջին նախահայրերը շնչելու, ապրելու, լինելու համար ստիպված էին պայքարել՝ գոյատևելու, հզորանալու համար:

Ավարայրից առաջ թագավորներ ունեինք, բանակներ զինավառ, որոնք կանգնում էին օտար փոթորիկների առջև, կուրծք էին տալիս ահեղ հեղեղներին:

Նրանք գնում էին հաղթելու և ապրելու համար:

Ավարայրը այդ իմաստով հերքումը եղավ նախորդների, բայց և նրանց երազների հաստատումը, և եղավ մի նոր սկիզբ:

Ավարայրում հայերը գնացին ոչ միայն հաղթելու, այլ նաև մեռնելու համար: Ավարայրում հայերը իրապես մեռան, որպեսզի ապրեն մնացածները, որովհետև նրանք հասու էին Ավետարանի իմաստության. «Հատն ցորենոյ եթէ ոչ մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ»:

Հաճախ կարծվում է, թե քրիստոնեությունը ստրկության, լոկ հնազանդության ուսմունք է:

Մինչդեռ տասնյակ դարեր առաջ Ավարայրը ապացուցեց, որ քրիստոնեությունը ոչ թե ստրկության, կույր հնազանդության, այլ սխրանքի, հավերժության ուսմունք է:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերևս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի և խավարի, կյանքի և մահվան, հավատի և հավատուրացության, հայրենիքի ու ստրկացման իրարամերժ գաղափարները էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ ևս Հիսուսի՝ մեռնելով ապրելու պատգամը:

Մաշտոցը Աստծուն խոսեցրեց հայերենով:

Ղևոնդը Հիսուսին պաշտպանեց իր կյանքի կենդանի պատարագով:

Վարդանը հայրենիքը և քրիստոնեությունը սրբագործեց իր կարմիր արյունով:

Ավարայրը մեր հոգու վիթխարի ընդվզումն էր:

Այնտեղ ոչ միայն մեր ռազմական ուժն էր մարտնչում: Այնտեղ զինվորյալ էին բոլորը. մտքի և հոգու, Լույսի և Ավետարանի, հողի և հայրենիքի մշակները էին կռվի դաշտ իջել, նրանք, որ իրենց ամբողջ կյանքում Լույս էին երազել, գրքեր գրել, մագաղաթներ ծաղկել, տաճարներ կառուցել՝ հիմա Ավարայր էին իջել իրենց էությունը, Լույսի իրենց պաշտամունքը խավարի, մահվան ճանկերից փրկելու համար:

Եվ դարեր անցան:

Եվ ամեն դար բերեց իր Ավարայրը:

Ամեն դար իր Վարդանը ունեցավ:

Ամեն դար ունեցավ իր Ղևոնդը:

Մեր կյանքի իմաստը Ավարայրը եղավ:

Ժամանակներ եղան, երբ թվաց, թե հայոց հոգևոր նավը պետք է խորտակվի կյանքի ահարկու ալիքների մեջ:

Ժամանակ եղավ, երբ բովանդակ աշխարհը անարդար վճիռ արձակեց, որ բարություն, սեր սերմանողը պետք է մեռնի:

Սակայն նա, որ սեր էր սերմանում և Ավարայր ուներ՝ նա Ավարայրը կրկնեց Սարդարապատով.

Ղևոնդ երեցին փոխարինելու եկավ Գարեգին եպիսկոպոսը,

Վարդանին՝ Անդրանիկը,

Տղմուտին՝ Արաքսը:

Իսկ ի՞նչ էր եղածը:

Առաջին հայացքից՝ մի ճակատամարտ:

Բայց պատերազմ էր այն,

Ու պարտություն էր այն,

Որ հաղթանակ եղավ,

Եղավ անմահություն:

Այս էր եղածը... Այս էր Ավարայրը...»:

Բանախոսության ավարտին տ. Եզնիկ

աբդ. Պետրոսյանը մասնավոր կարևորությամբ շեշտում է նաև.

«Այսօր, երբ ոգեկոչում ենք հիշատակը ս. Ղևոնդյանց քահանայից և Վարդանանց հայ մարտիկների, ունենք նաև սրտագին մի պարտականություն՝ շնորհավորելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Իր անվանակոչության տոնի առթիվ:

Եվ այս զուգադիպությունը պատահականություն չէ, որովհետև ինչպես անցյալի մեր բոլոր Հայրապետները, այսօր էլ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը ս. Ղևոնդյանց նախանձախնդրությամբ և Վարդանանց արիությամբ աշխատում է կենդանի և վառ պահել մեր անցյալի ուխտապահ հայ հոգևորականության՝ Ղևոնդյանց քահանաների սուրբ ավանդությունը և հայ հավատի կրակը, ինչպես ի հայրենիս, նաև աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի հոգում՝ Վարդանանց հերոսական ոգին և անսակարկելի հայրենասիրությունը:

Թող երկար, շատ երկար բազմի Հայոց Հայրապետը Լուսավորչի գահի վրա՝ ի պայծառություն Ղևոնդյանց արյունով ամրացած ու ծաղկած հայ եկեղեցու և ի բարություն հայրենյաց»:

Այնուհետև գործադրվում է օրվա տոնի խորհրդին նվիրված բովանդակալից գեղարվեստական մի հայտագիր: Հոգևոր ճեմարանի ուսանողներ Հարություն սրկ. Սարգիսյանը, Վաչե սրկ. Նալբանդյանը, Գրիգոր սրկ. Զմրուխտյանը, Սարգիս Մանուկյանը, Հակոբ Գլընճյանը, Հարություն Ասատրյանը և Բյուզանդ Գալայճյանը հանդիսականներին են ներկայացնում Եղիշեի Վարդանանց պատմությունը ընդհանուր գծերով՝ ըստ հետևյալ դասակարգման. Եղիշեի հեղինակային խոսքը, Հազկերտ արքայի հրովարտակը հավատուրացության մասին, հայոց պատասխանը Հազկերտ արքային, Վարդան Մամիկոնյանի ճառը Ավարայրի դաշտում և Ղևոնդ երեցի ճառը նույն առիթով, «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին» և դավաճանի՝ Վասակի դատապարտումը:

Մեջընդմեջ հոգևոր ճեմարանի ուսանողները երգում են «Բամ փորոտան», «Երգ մեռնող հայրենասերի», «Իմ հայրենյաց հոգի Վարդան» խմբերգերը, իսկ Վրեժ սրկ. Նաջարյանը ապրումով կատարում է «Լռեց: Ամպերը եկան» մեներգը:

Հանդիսության ավարտին օրհնության խոսք է ասում ազգիս Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով, որ Վարդանանց հերոսամարտը հայ ժողովրդի, հայ եկեղեցու համար **եղե՛լ է, է՛ և կմնա՝** միշտ իբրև ամենանվիրական սրբություններից մեկը և անմոռաց էջը մեր ազատագրական պայքարի, որի գաղափարի ու լույսի մեջ սերունդներ են դաստիարակվել:

Հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 24-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը հյուրաբար գտնվում էր Լենինականում, տեղի հայոց ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, ս. պատարագի ընթացքում Ծիրակի թեմի ողջ հոգևորականությանն ու հավատացյալ ժողովրդին հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, քարոզում է «Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ» (Հովհ. ԺԵ 12) բնաբանով:

* * *

Մարտի 1-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Մարտի 8-ին, կիրակի.—Բ կիրակի քառասնորդական պահոց (Արտաքսման).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա խորհրդի մասին հոգեշունչ քարոզ է խոսում տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Մարտի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում մահմեդականության վերաբերյալ զեկուցում է տ. Բագրատ աբդ. Գալըստյանը:

* * *

Մարտի 9-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը ճաշկերույթ է տրվում «Էջմիածին» ամսագրի նախկին խմբագիր, Գերագույն հոգևոր խորհրդի գիտ. քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս դոկտ.-պրոֆ. Աշոտ Գարեգինի Աբրահամյանի ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակի առիթով:

Ճաշկերույթին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Պարգև, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և մայրավանքի պատասխանատու անձինք:

Վեհափառ Հայրապետը շնորհավորում է հարգելի հոբելյարին, նշում նրա կատարած օգտակար աշխատանքը Մայր Աթոռում 1944—1955 թվականներին:

Ներկաներից ոմանք ջերմորեն ողջունում են հոբելյարին, որը վերջում որդիական երախտագիտության և շնորհակալության խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին՝ Նրա բարձր ուշադրության համար:

*
* *

Մարտի 10-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Նարեկ քհն. Թնգրյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Բագրատ աբդ. Գալստյանը՝ «Հայր մեղայ յերկինս և առաջի քոյ» (Ղուկ. ԺԵ 18) բնաբանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

*
* *

Մարտի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում ավանդության կարևորության վերաբերյալ զեկուցում է տ. Արսեն եպս. Բերբերյանը։

*
* *

Մարտի 15-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում սրտաբանության վերաբերյալ բանախոսում է բժշկական գիտությունների դոկտ.-պրոֆ. Զավեն Դոլաբջյանը։

Բանախոսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները ու ուսանողները։

Հարգարժան պրոֆեսորը ներկաներին ծանոթացնում է սրտին, նրա գործունեությանը և սրտային մի շարք հիվանդություններին։

Հարգելի պրոֆեսորը վերջում հանգամանորեն կանգ է առնում վերջերս Երևանում գումարված սրտաբանության համաշխարհային համաճարակագիտության համաժողովի գիտական-պատմական նշանակության վրա։

Վերջում բանախոսը սիրով պատասխանում է ներկաների հարցերին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել դոկտ.-պրոֆ. Զավեն Դոլաբջյանին և ջերմորեն զրույց ունենում նրա հետ։

*
* *

Մարտի 17-ին, կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսի).

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մասիս ուբդ. Գալստյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Եզնիկ աբդ. Պետրոսյանը՝ «Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար» (Ղուկ. ԺԶ 8) բնաբանով։

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը։

*
* *

Մարտի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը։

*
* *

Մարտի 24-ին, կիրակի.—Ե կիրակի քառասնորդական պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Ս. պատարագի ավարտին տեղի է ունենում հոգեհանգիստ՝ անվանի գրականագետ, գրող Խաչիկ Դաշտենցի մահվան առթիվ։

Այս կապակցությամբ հուզիչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով հանգուցյալի գրական, գրականագիտական ու հայրենասիրական արժանիքները։

*
* *

Մարտի 26-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին Հայաստանում գտնվող ֆրանսիացի մի խումբ ճարտարապետներ և հնագետներ՝ գլխավորությամբ ֆրանսահայ անվանի ճարտարապետ Էդվարդ Ութուջյանի։

Հարգարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։ Հայոց Հայրապետի և ֆրանսիացի հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ ջերմ մթնոլորտում։

*
* *

Մարտի 28-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեց Հունգարիայի կրոնական գործերի նախարար պրն. Իմրե Միկլոշը՝ ընկերակցությամբ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Պ. Մակարցևի և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանի։

Մեծահարգ հյուրերին Վեհարանում բարեհաճեց ընդունել Հայոց Հայրապետը և զրույց ունեցավ նրանց հետ՝ ջերմ մթնոլորտում։

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՄԱՀՎԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ

Մոնրեալ

1973 թվականի հոկտեմբերի 24-ին, չորեքշաբթի օրը, Մոնրեալի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հանդիսավորությամբ նշվում է ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը՝ նախագահությամբ Կանադայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանի:

Հանդիսությունը սկսվում է երեկոյան ժամը 20.15-ին՝ ներկայությամբ Մոնրեալի մշակութասեր հայ հասարակության և հրավերով Սոնրեալում գտնվող տաղանդավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ու ամերիկահայ մտավորական Զարեհ Սելբոնյանի:

Ողջույնի և բացման խոսք է ասում հանդիսավար Միսաք Կուտսուզյանը՝ շեշտելով, որ հայ ժողովուրդը ոչ միայն տարեդարձներ է տոնում, այլ նաև դարադարձներ, ինչպես 1500-ամյակները գրերի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության, Վարդանանց հերոսամարտի, 300-ամյակը Աստվածաշնչի տպագրության, 2750-ամյակը Երևանի հիմնադրության, իսկ այսօր՝ 800-ամյակը ս. Ներսես Շնորհալու մահվան:

Բացման խոսքից հետո Հայկ Միսաքյանը մեներգում է «Ձայս յարկ» մեղեդին՝ երգեհոնային ընկերակցությամբ Արթո Մյուհենտիսյանի:

Այնուհետև ս. Ներսես Շնորհալու վարչական գործունեության և հոգևոր-բանաստեղծական ու մատենագրական վաստակի մասին բովանդակալից բանախոսությամբ հանդես է գալիս տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյանը:

Եկեղեցու «Կոմիտաս» դպրաց դասը երգում է «Սիոնի որդիք» շարականը՝ ղեկավարությամբ Հակոբ Ցնծալյանի: Իսկ դպրաց դասի անդամ Վահան Շաքարյանը մեներգում է «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերգը:

Հանդիսության հաճելի անակնկալը եղավ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի խուսքը հայ եկեղեցու պատմական և արդի առաքելության ու, մասնավորաբար, ս. Ներսես Շնորհալու անզուգական դերի մասին: Վերջում սիրված բանաստեղծուհին խոր ներշնչումով արտասանում է իր «Ոչ միայն հացիվ» բանաստեղծությունը:

Ապա արվեստագիտուհի օր. Անահիտ Արթինյանը երգեհոնի վրա կատարում է «Նորահրաշ», «Էջ Միածինն ի Հօրէ» շարականները և մի հատված Բախից:

Հանդիսության վերջում Նորայր Արթինյանը, երգեհոնային նվագի ընկերակցությամբ, ցուցադրում է լուսապատկերներ հայրենի տեսարանների և հնաբույր վանքերի:

Հանդիսությունն ավարտվում է «Կոմիտաս» երգչախմբի կատարած «Հայր մեր»-ով:

Շնորհավորանքի արժանի են ծխական խորհուրդը և հանդիսության հայտագրի պատրաստող Մամիկոնյան մշակութային հանձնախումբը՝ սույն բովանդակալից ծրագրի կազմակերպման և ներկայացման համար:

Իրաք

Իրաքում տեղի են ունենում մի քանի հանդիսություններ՝ նվիրված ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին:

Առաջին հանդիսությունները տեղի է ունենում Բասրայում՝ տեղի ս. Կարապետ մատուռն օծման առթիվ, 1973 թվականի հուլիսի 18-ին՝ նախագահությամբ Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի:

Բացման խոսքով հանդես է գալիս Ասքանազ Վարդանյանը: Բանախոսում է տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը՝ ներկայացնելով Շնորհալի Հայրապետի կյանքն ու գործը, նրա կրոնա-գրական վաստակը:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի հայտագիր։

Հանդիսությունն ավարտվում է առաջնորդ սրբազան հոր փակման խոսքով և «Պահպանիչ»-ով։

Գրաճյանը և Նուբար Նազարեթյանը ներկայացնում են հանդիսականներին ս. Ներսես Շնորհալու կյանքն ու գործը։

Հիշատակի հանդեսը փակվում է առաջնորդ սրբազան հոր «Պահպանիչ»-ով։

* * *

Երկրորդ հանդիսությունը կազմակերպում է Իրաքի Հ. Բ. Ը. Մ. մշակութային հանձնախումբը 1973 թվականի օգոստոսի 14-ին՝ նախագահությամբ առաջնորդ սրբազան հոր։

Տ. Օշական քհն. Գրլրճյանն ընթերցում է Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի 18 հունվար 1973 թվակիր կոնդակը՝ նվիրված ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին։

Ապա ընթերցվում են մի քանի հատվածներ ս. Ներսես Շնորհալի Հայրապետի գրական ժառանգությունից և երգվում շարականներ հավերժ պատշաճի։

Այնուհետև օրվա քահանախոսներ Հակոբ

* * *

Երրորդ հանդիսությունը ձեռնարկվում է Բաղդադի հայ երիտասարդների երկսեռ միության կողմից, 1974 թվականի հունվարի 11-ին՝ նախագահությամբ առաջնորդ սրբազան հոր։

Քահանախոսում է Բասրայի հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը։

Այնուհետև ներկայացվում է կենդանի մի պատկեր՝ քաղվածաբար Շնորհալու ստեղծագործություններից։

Հանդիսությունն ավարտվում է առաջնորդ սրբազան հոր օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով։



ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԸ

1973 թվականի դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, եկեղեցական հանդիսավոր արարողությամբ նշվեց Տորոնտոյի հայոց ս. Երրորդություն եկեղեցու օծման քսանամյակը՝ նախագահությամբ Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

Տորոնտոյի հայ համայնքը Կանադայում հայկական երկրորդ կազմակերպված գաղութն է՝ Հյուսիսային Ամերիկայի հայոց տիրախնամ արևելյան թեմի հոգևոր առաջնորդության ներքո:

Ս. Երրորդությունն եկեղեցին կառուցվել է 1953 թվականին և օծվել ձեռամբ ժամանակի առաջնորդ տ. Տիրան արքեպ. Ներսոյանի:

1973 թվականի դեկտեմբերի 8-ին, երեկոյան, գեղեցիկ զուգադիպությամբ, իբրև նախատոնակ եկեղեցու հոբելյանի, եկեղեցու կրտսեր դպրաց դասը մասնակցել է Տորոնտո քաղաքի արվեստների հիմնարկության, հաղորդակցությանց կոմիտեի և եկեղեցիների խորհրդի կողմից կազմակերպված ս. Ծննդյան տոնի միջազգային փառատոնին՝ հանդես գալով և ս. Ծնունդ մաղթելով կանադական քրիստոնյա ժողովուրդներին՝ հայկական միջնադարյան հոգեզմայլ շարականներով:

Դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, ս. Երրորդություն եկեղեցում ս. պատարագ է մատուցում առաջնորդ տ. Թորգոմ սրբազանը և հոգեշունչ քարոզով վեր հանում եկեղեցուն ծառայելու և նվիրվելու իմաստը:

Այս առթիվ առաջնորդ սրբազան հայրը դպրության չորս աստիճաններ է շնորհում 11 պատանիների և կիսասարկավագության աստիճան՝ երկու դպիրների:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի մասնավորի եկեղեցու հանգուցյալ բարերարների հիշատակին:

Նույն օրը, երեկոյան, «Աքայլայն» հյուրանոցի սրահներում տեղի ունեցավ եկեղեցու քսանամյա տարեդարձի ճաշկերույթ-ընդունելությունը՝ նախագահությամբ առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

Այս առթիվ տպագրվում է պատկերազարդ գեղեցիկ մի ալբոմ Տորոնտոյի հայ եկեղեցու և համայնքի ներքին կյանքի վերաբերյալ՝ մեկենասությամբ եկեղեցու հիմնադիր-անդամ և համայնքի նախագահուհի տիկին Փերուզ Պապայանի:

Ճաշկերույթի ընթացքում արտասանվում են ուղերձներ, և գործադրվում է գեղարվեստական մի կոկիկ հայտագիր, որտեղ առաջին անգամ ելույթ է ունենում հայ պատանիներից կազմված նորակազմ պարախումբը:

Ընդունելության ժամանակ հովվական ջերմ ու բովանդակալից ուղերձով հանդես է գալիս համայնքի հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը:

Ճաշկերույթ-հանդիսության ավարտին ներկաներին իր պատգամն ու օրհնությունն է տալիս առաջնորդ սրբազան հայրը և ե-

կեղեցու հիմնադիր անդամներից ու պատվո ատենադպիր Սեդրակ Ատուրյանին է հանձնում Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի բազալտե

խաչքար նվերը՝ զետեղելու համար եկեղեցու մեջ իբրև հիշատակ ս. Էջիածնից:

Տորոնտոյի հայ գաղութն այսօր ժառանգորդն է այն փոքրաթիվ հայորդիների, որոնք ամեն ինչից զրկվեցին և, սակայն, ապընջականություն գտնելով կանադական այս հյուրընկալ ափերում, ամուր պահեցին հայ հավատքն ու հայկական տոհմային գիտակցությունը:

Այժմ հայ համայնքի կյանքում գործում են օժանդակ եկեղեցասեր տիկնանց և Հայաստանյայց եկեղեցու երիտասարդաց միությունները, հայ և կիրակնօրյա դպրոցները, «Նոր սերունդ» ամսաթերթը, դպրաց դասը և այլ կազմակերպություններ, որոնք համայնքային մշակութային, ընկերային ու հասարակական ձեռնարկներով ձգտում են վառ պահել ազգային արժանապատվությունն ու նախաձեռնությունը՝ օրինակելի բարեխղճությամբ և եկեղեցանվեր ուխտապահությամբ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տորոնտոյի համայնքի հայորդիներին ս. Երրորդություն եկեղեցու հոբելյանի առթիվ և մաղթում անսպառ եռանդ և նորանոր հաջողություններ սփյուռքում հայապահպանման սրբազան գործին:



ՄԵԾԱՆՈՒՆ ԵՎ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐ ԼԵՈՅԻ* ԵՎ Ն. ԱԴՈՆՑԻ** ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, փետրուարի 12, 1906

Առ Ամենապատիւ Տ. Տ. Մաղաքիայ Սրբազան Արքեպիսկոպոս Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ձեր հանրաճանաչ լուսամիտ ուշադրութիւնը դեպի հայ գրականութիւնը ինձ վրա տաճութիւն է ներշնչում ներկայ դիմումն անելու Ձեր ամենապատուութեան: Խնդրանքիս առարկան չափազանց կարեւոր լինելով ինձ համար, ես ոյժ եմ ստանում հաշուելու այն մտքի հետ, որ այս հեռաւոր տեղից մի կողմնակի գործով պիտի խլեմ Ձեր բազմազբաղ ժամերից մեկն ու մեկը: Կանխում եմ Ձեր ներողամտութիւնը հայցելու, Սրբազան Հայր, եւ յոյս ունեմ թէ կարժանանամ նրան, քանի որ Դուք կը տեսնէք որ իրաւ, իմ առջեւ, բացի Ձեզ դիմելուց, ուրիշ մի ճանապարհ չէ մնացել:

Երկար տարիներից ի վեր ես, Սրբազան, պատրաստել եմ նիւթեր ԺԹ դարի հայոց մի ընդարձակ եւ բազմակողմանի պատմութիւնը գրելու համար, մի գործ, որ շարունակութիւնը պիտի լինի իմ «Հայկական տպագրութիւն» անունով երկհատոր աշխատութեան: Մեկ տարուց աւելի է, որ ես սկսել եմ գրել, բայց տարաբախտաբար, կայ մի մեծ պակասութիւն, որ միանգամայն ջլատում է գործս: Այդ այն է, որ ես, չը նայած իմ բազմաթիւ դիմումներին, ոչ մի տեղ չեմ կարողանում գտնել Ազգային ժողովի Ատենագրութիւնների լիակատար ժողովածուն, առանց որի, իհարկէ, չէ կարող լինել ոչ մի պատմութիւն: Բարեկամ անձանց աջակցութեամբ, որոնց անհունապէս շնորհապարտ եմ, ինձ հաջողուեց ձեռք բերել «Ատենագրութիւնները» 1860—1870 տարեշրջանների մի հատորի մէջ, բայց այդ հատորը աւելի եւս կարեւոր է դարձնում յաջորդ բոլոր նստաշրջանների Ատենագրութիւններն էլ: Այստեղ իմ որոնումները ապարդիւն անցան: Ես նոյն իսկ գնացի Էջմիածին, բայց այնտեղ երկու-երեք տետրակ միայն գտայ: Այսպիսով Երեւփոխա-

---

* Պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանեան, 1860—1932), հայտնի է որպես խոշորագոյն մշակութային գործիչ՝ հայ ժողովրդի պատմության, հուշագրության, գրականության, մանկավարժության ասպարէզներում մատուցած իր բազմամյա ծառայություններով:

Լեոն իր «Հայկական տպագրութիւն» երկհատոր աշխատությունը գրելու համար, նյութեր հայթայթելու նպատակով, Թիֆլիսից 1906 թ. փետրվարի 12-ին դիմում է Կ. Պոլսի ժամանակի հայոց պատրիարք արժանահիշատակ Օրմանյան գիտնական սրբազանին (1840—1918):

** Հրատարակության ենք հանձնում նաև խոշորագույն պատմաբան Նիկողայոս Ադոնցի (Տեր-Ավետիքյան, 1871—1942) նորահայտ նամակը, նույն նպատակով՝ նյութեր ձեռք բերելու համար հասցեագրված Օրմանյան պատրիարքին 1907 թ. դեկտեմբերի 3-ին, Պետերբուրգից:

Վերոհիշյալ երկու նամակները, ի շարս այլ բազմաթիվ նյութերի, Վեհափառ Հայրապետի շնորհիվ ստացվել է արտասահմանից և հանձնվել Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին:

Երկու վիտնականների ինդրանքը կատարվել է: Այդ մասին է վկայում ստացված նամակների վրա մակագրված «Առաքվեց նյութերը»:

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՑԱՆ

նական ժողովի գործունեութիւնը, որի շուրջը պտտում է Թիւրքահայ պատմութիւնը, մնում է ինձ անծանօթ իր նշանաւոր մասով: Բազմամեայ ջանքերս, տքնութիւններս պիտի կորչին, եթէ այս մեծ արգելքը անյաղթելի մնայ:

Ապարդիւն փորձելով բոլոր միջոցները, վերջ ի վերջոյ իմ մէջ մնաց այն վառ հաւատը, որ միայն Դուք, Սրբազան Հայր, կարող էք ինձ օգնել այս դժուարութեան մէջ: Ես ահա աղաչում եմ Ձեզ որ չը մերժէք ինձ օգնութիւնը: Պատրիարքարանը, հաւատացած եմ, կունենայ բոլոր Ատենագրութիւնները, սկսած 1870 թուականներից մինչեւ վերջը, ինչպէս նաև զանազան ժամանակ լոյս հանած պաշտօնական հրատարակութիւնները (տեղեկագիրներ, հաշիւներ և այլն): Արդեօք չէ՞ կարելի դրանցից մի մի օրինակ շնորհել ինձ գոնէ ժամանակաւորապէս, յետ դարձնելու պայմանով, որ պիտի սրբութեամբ կատարեմ:

Իմ տենչանքս է ներկայացնել այստեղի հայութեան մի պատմութիւն, որի մէջ հնար եղածին չափ լրութեամբ պատկերացած լինի Թիւրքիայի հայոց կեանքը իր բազմակողմանի երեւոյթներով: Հաւատացած եմ, Սրբազան, որ Ձեր սրտին էլ խիստ մօտ է այս գաղափարը, հաւատացած եմ, որ Դուք անուշադիր չէք թողնի իմ այս խնդիրքը եւ կօգնէք ինձ ոչ միայն խնդրած նիւթերը ինձ տալով, այլեւ կարելի կը համարէք հաղորդակից անել ինձ այնպիսի նիւթերի, որոնք հրատարակուած չեն: Այն ժամանակ ես ինձ անասելի երջանիկ կը համարեմ մեր Ազգային Պատրիարքարանի ինձ ցոյց տուած լուսամիտ իրախուսանքով եւ աջակցութեամբ:

Նորից Ձեր ներողամտութիւնը խնդրելով իմ այս դիմումի համար, մնում եմ, Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ձեր ամենախոնարհ ծառայ

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ (Լեհ)

Հասցես. Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոց:

8 դեկտեմբերի 1907, Պետերբուրգ

Գերապատիւ Սրբազան Հայր,

Ի վաղուց հետէ մի իղձ ունեմ, որի հասար կը համարձակիմ սրբազնութեանդ ներողութիւն պատճառել: Որովհետեւ մասնագիտութիւնս Հայրենագիտութիւնն է տեղւոյն Համալսարանում Արեւելեան լեզուների ֆակուլտետում, անհրաժեշտ պէտք ունիմ Պոլսոյ «Երեսփոխանական ընդհանուր ժողովոյ ատենագրութեանց», որ իր ժամանակին պարբերաբար հրատարակւում էր: Արդ՝ անվերջ պիտի պարտաւորեցնէք ինձ, եթէ այդ «Ատենագրութիւնից» մի օրինակ ինձ հայթայթել կարենաք, ինչ գնով լինի: Թերեւս Պատրիարքարանում, կամ գրավաճառների եւ կամ եկեղեցեաց դիւաններում գտնւին: Քանիցս անգամ դիմել եմ Պոլիս նոյն խնդրով, բայց որոշ արդիւնքի չեմ հասել: Այս անգամ ստիպւած եմ դիմել բարձր սրբազնութեանդ հայրական աջակցութեան յաջողեցնել ինձ յիշեալ հրատարակութիւններից մի օրինակ ձեռք բերել, որի համար կայտնեմ իմ խորին շնորհակալիքս:

Համբուրի աջդ մնամ՝

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Հասցես, տեղւոյն եկեղեցական խորհուրդ:

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ԾԱՂԿՈՂ ԾԵՐՈՒՆ ՔԱՀԱՆԱ

Վասպուրականի մանրանկարչության դպրոցի առավել հայտնի դեմքերից մեկն է Ծերունը: Նրա անունն ու համբավը գուցե և ոչ այնքան իր ապրած ժամանակներում, որքան մեր օրերում է տարածում ստացել: Մասնագիտական և նույնիսկ ավելի մասսայական բնույթի աշխատություններում Վասպուրականի մասին խոսելիս առաջին հերթին այս ծաղկողի անունն է նշվել[1]: Ծերունը հիրավի ուրույն տեղ է զբաղեցնում Վասպուրականի մանրանկարչության ինքնատիպ դպրոցում, և նրա թողած ժառանգությունը նկատելի արժեք ունի: Ժամանակագրական առումով շատ ավելի վաղ՝ մինչ Ծերունի հանդես գալը, Վասպուրականում գործել են մի շարք ուրիշ նկարիչներ՝ Սիմեոն Արճիշեցի[2], Կիրակոս[3], Զաքարիա Աղթամարցի[4], որոնց ստեղծագործությունները ոչ միայն վասպուրականի մանրանկարչության ոճի առաջին, այլև լավագույն նմուշներն են: Մինչդեռ այդ հեղինակներից և ոչ մեկը չի հիշվել:

Ծերունը ստեղծագործական ասպարեզ է դուրս եկել XIV դարի երկրորդ կեսին: 1391-ին նա հիշվում է որպես վարդապետ և փորձառու գրիչ[5]: Բնականաբար այդ ժամանակ, այսինքն 80-ական թվականներին, նա արդեն հասուն մի գործիչ էր: Դա կողմնակիորեն հավաստվում է նաև պահպանված ձեռագրերի ժամանակահատվածով՝ 1390—1412 թվականներ: Պետք է ենթադրել, որ նրա գործունեության սկզբնական շրջանի աշխատանքներից մեզ ոչինչ չի հասել, կամ հայտնի չէ:

Ծերունի կենսագրական տեղեկությունները, ինչպես մեր շատ գրիչների ու մանրանկարիչների, կցկտուր են: Ապրել է Վասպուրականի Ոստան հինավուրց քաղաքում: Հայրը՝ Ստեփանոսը, նույնպես քահանա էր: Մոր անունը եղել է Էլիխաթուն կամ Թաճխաթուն: Հիշատակագրական տեղեկություններից իմանում ենք, որ Ծերունի կինը՝ Արդունը, օգնել է ամուսնուն նրա աշխատատար գործում՝ հատկապես ձեռագրի համար թուղթ կոկելով: «Ընդ նոսին և զանպիտան գրիչ զԾերուն,... և զկենակիցն իւր, որ աշխատեցաւ ի թուղթ կոկելն...»: Նկարիչը ունեցել է երկու քույր՝ Մելեք և Հերիք անուններով: Հավանաբար զավակներ չի ունեցել:

Ծերունը տեղեկություն է թողել նաև իր ուսուցիչների մասին. «...ընդ նոսին... և զվարդապետն իւր զԿիրակոս կրաւնաւորն, և զՅոհաննէս կրաւնաւոր, որ զգիրն ուսոյց,

---

[1] Свирин А. Н., Миниатюра древней Армении, М., 1939, ст. 107—116; Дурново Л. А., Краткая История Древнеармянской живописи, Ер., 1957, ст. 45—46; Драмян Р. Г., Армянские миниатюра и книжное искусство («Очерки по истории искусство Армении, М.—Л., 1939); Измайлова Т. А., Армянские иллюстрированные рукописи Эрмитажа, Л., 1968 и т. д.

[2] Հ. Հակոբյան, Սիմեոն Արճիշեցին Վասպուրականի մանրանկարչատան դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչ, «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 297—320:

[3] Հ. Հակոբյան, Մանրանկարիչ Զաքարիա Աղթամարցի, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1966, Երևան, էջ 189—209:

[4] Հ. Հակոբյան, Մանրանկարիչ Կիրակոս քահանան, «Էջմիածին», Գ, 1978, էջ 48—58:

[5] Վարդապետ տիտղոսը նաև ուսուցչի իմաստով է գործածված (տես, Մատենադարան, ձեռ. № 1874).

և զԳԼՈՐԳ վարդապետն, որ զծագին ուսոյց, և զայլ ամենայն արեան մերձաւորսն»[6]:

Մերուշի ընդօրինակած և պատկերազարդած ձեռագրերից մեզ հայտնի են վեցը.

1. Ձեռ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 4938[7], Գրիգոր Նարեկացի, Մատյան Ողբերգության, 1390 թվ., Ոստան, գրիչ և ծաղկող՝ Մերուշ, ստացող՝ Հովհաննես կրոնավոր, կազմող՝ Թումա: Թերթ՝ 294, թուղթ, 28×17 մեծություն, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար—1բ էջ՝ Գրիգոր Նարեկացու դիմապատկերը կանգնած, կան անվանաթերթեր և լուսանցազարդեր:

Հիշատակարան—«...Գրեցաւ սա ի թուականին Հայոց ՊԼԹ. (1390), ի քաղաքին Ոստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան տէր Զաքարիայի, ձեռամբ ամենամեղ և անիմաստ և վայ և եղուկ գրչի Մերուշի...»[8]:

2. Ձեռ. № 8772, Ավետարան, 1391 թվ., ծաղկող՝ Մերուշ, ստացող՝ Սիմեոն, Գրիգոր: Թերթ՝ 275, թուղթ, 15,5×11,5 մեծություն, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար— Ավետարանական-տոնական լրիվ շարք 23 պատկերներով: Խորանաներ, ավետարանիչների դիմանկարներ ու անվանաթերթեր, կան հարուստ լուսանցազարդեր:

Հիշատակարան—«Զոչ յիշելիս ի գրչաց զՄերուշ մեղապարտ ծաղկողս յիշեցէք ի Քրիստոս... Արդ, ի թուականին Հայոց ՊԽ. (1391), ես՝ Սիմէոն քահանայս ետու վերըստին նորոգել զսուրբ աւետարանս՝ տնաւրինականաւքն և ցանկաւք և ծաղկաւք, ձեռամբ յոգնամեղ Մերուշի...»[9]:

3. Ձեռ. № 1874, Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, 1391 թվ., Վան. գրիչ՝ Թումա քահանա, ծաղկ.՝ Մերուշ, ստացող՝ Սիմեոն: Թերթ՝ 370, թղթ. 26,5×17,8 մեծություն, միասյուն, բոլորգիր:

Մանրանկար—1բ էջ, Գրիգոր Նարեկացի՝ կանգնած, նրա առջև ծնրադիր Սիմեոն քահանան է: Կան նաև կիսախորաններ և լուսանցազարդեր:

Հիշատակարան—«Գրեցաւ սայ ի թուականին Հայոց... (1391), ի քաղաքս, որ կոչի Վան... ձեռամբ ամենամեղ և անիմաստ Թումա քահանայի և սուտանուն գրչի...: ...Եւ զվարդապետն իմ զՄերուշ քահանայ յիշեցէք ի Քրիստոս Աստուած, որ առատն է ի տուրս բարեաց...»:

«Ով, մանկունք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք սմա կարդալով կամ տեսանելով, յիշեցէք յերկնագնաց յաղօթս ձեր զտառապեալ մեղաւք հոգիս՝ զՄերուշ ծաղկողս և զծնաւղսն իմ...»[10]:

4. Ձեռ. Լենինգրադի Պետական Էրմիտաժի № VP—1010, Ավետարան, 1395 թվ., Ոստան, գրիչ և նկարիչ՝ Մերուշ, ստացող՝ Խաչատուր կրոնավոր և Մկրտիչ, թերթ՝ 255, թուղթ, մեծություն՝ 32×25, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար—Ձեռագրում պահպանված են ավետարանական-տոնական պատկերների լրիվ շարքը. կան նաև Մերուշի ինքնանկարը, խորաններ, ավետարանիչների դիմանկարներ, անվանաթերթեր և լուսանցազարդեր:

Հիշատակարան—«Եւ արդ, ես՝ արտաքսեալ խորան անպիտան ծառայիս սուտանուն Մերուշ... վերցրի աւետարանս...»[11]:

5. Ձեռ. № 4670, Տոնական, 1401 թվ., Ոստան, գրիչ և ծաղկող՝ Մերուշ, ստացող՝ Ստեփանոս և Հովսեփ, կազմող՝ Սարգիս: Թերթ՝ 815, թուղթ, 50×34 մեծություն, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար—միայն գլխազարդեր:

Հիշատակարան—«...Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց, մեղաւորս յանմեղաց... Մերուշ... գրեցաւ սա ի քաղաքիս Ոստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Ստեփաննոսի նախավկային, ի թուականութիւնս Հայոց ՊԾ. (1401), ի հայրապետութեանն տէր Դաւթա Աղթամարա...»[12]:

6. Ձեռ. 4157, Ավետարան, 1412 թվ., Ոստան, գրիչ և ծաղկող՝ Մերուշ, ստացող՝

---

[6] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 137: Ինչպես պարզվում է, №№ 2, 3, 4 ձանոթագրություններում բերված մանրանկարներից բացի, Մերուշին նախորդել է նաև մեկ այլ մանրանկարիչ՝ իր ուսուցիչ Գևորգը (հավանաբար XIV դարի I կես), թեև, ցավոք, որևէ այլ տեղեկություն կամ աշխատանք այդ հեղինակից մեզ հայտնի չէ:

[7] Այսուհետև կնշվի միայն՝ «Ձեռ.», նկատի ունենալով, որ դրանք Մատենադարանի ձեռագրերն են:

[8] Հիշատակարաններ, ԺԴ դար, աշխ. Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1950, էջ 582—583: Հիշատակարաններից բերվում են միայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրող տողերը:

[9] Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 594—595:

[10] Հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 587—590:

[11] Այս ձեռագրերի ընդարձակ նկարագրությունը տվել է Տ. Ա. Իզմայլովսն «Армянские иллюстрированные рукописи Гос. Эрмитажа» կատալոգում, որտեղ և մեջ է բերված հիշատակարանի լրիվ տեքստը ռուսերեն թարգմանությամբ՝ էջ 120:

[12] Հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Ա, էջ 7:

Ստեփանոս քահանա, թերթ՝ 243, թուղթ, 25×18 մեծություն, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար—ավետարանիչների դիմանկարներ, ասվանաթերթեր, խորաններ ու լուսանցազարդեր:

Նկ. 1. Աբրահամի զոհաբերությունը

Հիշատակարան—«Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս Ուստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, ի հայրապետութեանն Աղթամարայ՝ տէր Դաւթի, և ի թուին Հայոց ՊԿԱ. (1412). ձեռամբ մեղապարտ և անարժան Մերունի...»[13]:

Այսպես ուրեմն, նշված ձեռագրերից միայն երկու Ավետարաններն են լրիվ պատկերազարդ: Թեմատիկ նկարները ունեն որոշակի շար՝ Աբրահամի զոհաբերությունը, Ավետում, Մնունդ, Մոգաց երկրպագությունը, Տյառնընդառաջ, Մկրտություն, Այլակերպություն, Հարսանիքն Կանայում, Պետրոսի թերահավատությունը, Հացով ու ձկով կերակրելը, Անդամալույծի բուժումը, Դիվահարի բուժումը, Նկանակի բաշխումը, Ղազարի հարությունը, Մուտք Երուսաղեմ, Վերջին ընթրիք, Հաղորդության խորհրդի հաստատում, Ոտնլվա, Մատնություն, Պիղատոսի դատը, Խաչելություն, Հարություն, Համբարձում, սուրբ Հոգու գալուստը:

Այն իր բնույթով ավելի շատ համապատասխանում է XII—XIII դարերի խմբագրական ձևերին, թեև մի քանի թեմաներ ավելի հին սովորույթների արտացոլման հետևանք են: Այդպիսիներից է, օրինակ, «Աբրահամի զոհաբերության» հին կտակարանային տեսարանը: Մանկադիր Աբրահամը մի ձեռքով Իսահակի՝ իր որդու մազերից է բռնել, մյուսով սուրը: Դիմացում՝ Սաբեկա ոարի վրա հայտնի ծառն է ու խոյը[14] (նկ. 1):

Ընդհանրապես Մերունի ձեռագրերի մանրանկարներից շատերը ունեն պատկերազարդական տեղական կանոնացված բնույթ: Դրանց հաճախ ենք հանդիպում մեր հեղինակին նախորդած վարպետների՝ Սիմեոն Արճիշեցու, Կիրակոսի, Զաքարիա Այթամարցու և Ստեփանոսի մոտ: Այդ նկարիչներին նվիրված հոդվածներում (ծանոթություններ 2, 3, 4) մենք հանգամանորեն խոսել ենք նման թեմաների մեկնաբանման և պատկերագրական բնույթի մասին: Ուստի ստորև, կրկնություններից խուսափելու համար, կանգ կառնենք ինքնատիպություն դրսևորող մեկ-երկու պատկերների վրա միայն:

Այս առումով բավականին հետաքրքրական է թվում վերնատանը Հաղորդության խորհուրդ հաստատելու տեսարանը: Հիսուսի երկու կողմերում՝ յուրաքանչյուրում վեցական առաքյալ են դասավորված: Զախում դրանց խումբը հորիզոնական դիրքով է ծավալվում, աջ կողմում՝ ուղղահայաց: Պատկերագրական այս ձևը ուշ է մուտք գործել Վասպուրական (համենայն դեպս, առաջին մանրանկարիչների մոտ չկար), և դա համարում ենք հայկական մանրանկարչության մյուս դպրոցների հետ, հատկապես Գլաձորի, մերձիմոտ փոխհարաբերության ու շփման հետևանք:

Ժողովրդական-կենցաղային նիստ ու կացի տպավորությունն ու տարրերը ավելի նկատելի են Պիղատոսի դատի տեսարանում (նկ. 2): Պիղատոսը ներկայացված է Հիսուսի հարցաքննության պահին, ավելի ճիշտ՝ հարցաքննության ավարտից հետո, երբ զինվորներից մեկը ջուր է լցնում, և նա ձեռքերն է լվանում: «Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն եւ ասէ. Քաւեալ եմ ես յա-

[13] Հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Ա, էջ 187:

[14] Նման պատկերագրական ձևը Վասպուրականում առաջին անգամ հանդիպում է XIV դարի հեղինակ Վարդան Արծեկցու մոտ (ձեռ. Մատ. №№ 4125 և 7456):

ունէ արդարոյդ այդորիկ, դուբ գիտասչիք»[15]:

Պիղատոսի ձեռքերը լվանալու պատկերը վաղ բրիստոնեական արվեստում վաղուց ընդունված է եղել: Հնագույն օրինակներից

Նկ. 2. Պիղատոսի դատը

մեկը Ռոսանոյի Ավետարանի մանրանկարն է: Դ. Այնալովը այդ հորինվածքը կապում է սիրիա-պաղեստինյան ավանդների հետ, որոնք իրենց հերթին գալիս են անվավեր գրականությունից[16]: Նույն ձևերին մենք հանդիպում ենք նաև կապադովկյան ժայռափոր եկեղեցիների որմնանկարներում (XI—XIII դդ.): Հավանաբար ձեռքերը լվանալը այն ժամանակ ինչ-որ արարողություն է եղել և ոչ միայն առանձնահատուկ արտահայտություն:

№ 8772 ձեռագրում «Համբարձումը» գբաղեցնում է երկու հանդիպակաց էջ՝ 12բ—13ա: Առաջինում, օվալաձև սկավառակի մեջ, տեղավորված են Հիսուսը և նրա սկավառակը վեր բարձրացնող հրեշտակ-

Նկ. 8. Դժոխքի ավերումը

ները: Մյուս էջում Մարիամ Աստվածածինն է առաքյալների հետ: Նույն սկզբունքը Ծերունը կիրառել է նաև «Սուրբ Հոգու գալուստը» տեսարանում՝ էջ 13բ—14ա: Թեմատիկ մեկ պատկերը երկու հանդիպակաց էջերում տեղադրելու սովորույթը Վասպուրականում նորույթ չէ (տես Զաքարիա Աղթամարցու և մեկ-երկու այլ հեղինակների գործերը): Այդ ձևի կիրառման ավելի վաղ շրջանի օրինակներ էլ մեզ հայտնի են նույնիսկ հունական ձեռագրերից[17]: Բայց այս դեպքում Ծերունի մոտ, կարծում ենք, որ ուղղակի ձեռագրի փոքր չափերն (15×11,5) են ստիպել հեղինակին դիմելու այդ միջոցին: Մեր այս ենթադրության օգտին են խոսում Լենինգրադի Էրմիտաժում գտնվող Ծերունի մյուս ձեռագրի նկարազար-

[15] Ավետարան Մատթեոսի, ԻԷ 24:

[16] Анналов Д. В., Эллинистические основы Византийского искусства, Пет., 1900, стр. 70. Այս թեմայի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում նաև Ն. Պ. Կոնդակովը (История Византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей, Одесса, 1876, стр. 80).

[17] Ծնունդը Աթոնի-Պանտելեյմովյան վանքի № 2 Ավետարանում (Кондаков Н. П., Очерки памятников Христианской иконографии и искусства, Петербург, 1900, рис. 81, 82).

Ստեփանոս քանանց, թերթ՝ 243, թուղթ, 25×18 մեծություն, երկսյուն, բոլորգիր:

Մանրանկար—ավետարանիչների դրամանկարներ, անվանաթերթեր, խորանների ու լուսանցազարդեր:

Նկ. 1. Աբրահամի զոհաբերությունը

Հիշատակարան—«Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքիս Ուստան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սրբոյն Ստեփաննոսի նախավկայի, ի հայրապետութեանն Աղթամարայ՝ տէր Դաւթի, և ի թուին Հայոց ՊԿԱ. (1412). ձեռամբ մեղապարտ և անարժան Ծերունի...»[13]:

Այսպես ուրեմն, նշված ձեռագրերից միայն երկու Ավետարաններն են լրիվ պատկերազարդ: Թեմատիկ նկարները ունեն որոշակի շար՝ Աբրահամի զոհաբերությունը. Ավետում, Ծնունդ, Մոգաց երկրպագությունը, Տյառնընդառաջ, Մկրտություն, Այլակերպություն, Հարսանիքն Կանայում, Պետրոսի թերահավատությունը, Հացով ու ձկով կերակրելը, Անդամալույծի բուժումը, Դիվահարի բուժումը, Նկանակի բաշխումը, Ղազարի հարությունը, Մուտք Երուսաղեմ, Վերջին ընթրիք, Հաղորդության խորհրդի հաստատում, Ոտնլվա, Մատնություն, Պիղատոսի դատը, Խաչելություն, Հարություն, Համբարձում, սուրբ Հոգու գալուստը:

Այն իր բնույթով ավելի շատ համապատասխանում է XII—XIII դարերի խմբագրական ձևերին, թեև մի քանի թեմաներ ավելի հին սովորույթների արտացոլման հետևանք են: Այդպիսիներից է, օրինակ, «Աբրահամի զոհաբերության» հին կտակարանային տեսարանը: Ծնկադիր Աբրահամը մի ձեռքով Իսահակի՝ իր որդու մազերից է բռնել, մյուսով սուրը: Դիմացում՝ Սարեկա սարի վրա հայտնի ծառն է ու խոյը[14] (նկ. 1):

Ընդհանրապես Ծերունի ձեռագրերի մանրանկարներից շատերը ունեն պատկերագրական տեղական կանոնացված բնույթ: Դրանց հաճախ ենք հանդիպում մեր հեղինակին նախորդած վարպետների՝ Սիմեոն Արճիշեցու, Կիրակոսի, Զաքարիա Ալթամարցու և Ստեփանոսի մոտ: Այդ նկարիչներին նվիրված հոդվածներում (ծանոթություններ 2, 3, 4) մենք հանգամանորեն խոսել ենք նման թեմաների մեկնաբանման և պատկերագրական բնույթի մասին: Ուստի ստորև, կրկնություններից խուսափելու համար, կանգ կառնենք ինքնատիպություն դրսևորող մեկ-երկու պատկերների վրա միայն:

Այս առումով բավականին հետաքրքրական է թվում վերնատանը Հաղորդության խորհուրդ հաստատելու տեսարանը: Հիսուսի երկու կողմերում՝ յուրաքանչյուրում վեցական առաքյալ են դասավորված: Ձախում դրանց խումբը հորիզոնական դիրքով է ծավալվում, աջ կողմում՝ ուղղահայաց: Պատկերագրական այս ձևը ուշ է մուտք գործել Վասպուրական (համենայն դեպս, առաջին մանրանկարիչների մոտ չկար), և դա համարում ենք հայկական մանրանկարչության մյուս դպրոցների հետ, հատկապես Գլաձորի, մերձիմոտ փոխհարաբերության ու շփման հետևանք:

Ժողովրդական-կենցաղային նիստ ու կացի տպավորությունն ու տարրերը ավելի նկատելի են Պիղատոսի դատի տեսարանում (նկ. 2): Պիղատոսը ներկայացված է Հիսուսի հարցաքննության պահին, ավելի ճիշտ՝ հարցաքննության ավարտից հետո, երբ զինվորներից մեկը ջուր է լցնում, և նա ձեռքերն է լվանում: «Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն եւ ասէ. Քաւեալ եմ ես յա-

[13] Հիշատակարաններ, ԺԵ դար, մասն Ա, էջ 187:

[14] Նման պատկերագրական ձևը Վասպուրականում առաջին անգամ հանդիպում է XIV դարի հեղինակ Վարդան Արծեկցու մոտ (ձեռ. Մատ. №№ 4125 և 7456):

ռեն է արդարոյդ այդորիկ, դուք գիտասչիք»[15]:

Պիղատոսի ձեռքերը լվանալու պատկերը վաղ քրիստոնեական արվեստում վաղուց ընդունված է եղել: Հնագույն օրինակներից

Նկ. 2. Պիղատոսի դատը

մեկը Ռոսանոյի Ավետարանի մանրանկարն է: Դ. Այնալովը այդ հորինվածքը կապում է սիրիա-պաղեստինյան ավանդների հետ, որոնք իրենց հերթին գալիս են անվավեր գրականությունից[16]: Նույն ձևերին մենք հանդիպում ենք նաև կապադովկյան ժայռափոր եկեղեցիների որմնանկարներում (XI—XIII դդ.): Հավանաբար ձեռքերը լվանալը այն ժամանակ ինչ-որ արարողություն է եղել և ոչ միայն առանձնահատուկ արտահայտություն:

№ 8772 ձեռագրում «Համբարձումը» գբաղեցնում է երկու հանդիպակաց էջ՝ 12բ—13ա: Առաջինում, օվալաձև սկավառակի մեջ, տեղավորված են Հիսուսը և նրա սկավառակը վեր բարձրացնող հրեշտակ-

Նկ. 3. Դժոխքի ավերումը

ները: Մյուս էջում Մարիամ Աստվածածինն է առաքյալների հետ: Նույն սկզբունքը Ծերունը կիրառել է նաև «Սուրբ Հոգու գալուստը» տեսարանում՝ էջ 13բ—14ա: Թեմատիկ մեկ պատկերը երկու հանդիպակաց էջերում տեղադրելու սովորությունը Վասպուրականում նորություն չէ (տես Զաքարիա Աղթամարցու և մեկ-երկու այլ հեղինակների գործերը): Այդ ձևի կիրառման ավելի վաղ շրջանի օրինակներ էլ մեզ հայտնի են նույնիսկ հունական ձեռագրերից[17]: Բայց այս դեպքում Ծերունի մոտ, կարծում ենք, որ ուղղակի ձեռագրի փոքր չափերն (15×11,5) են ստիպել հեղինակին դիմելու այդ միջոցին: Մեր այս ենթադրության օգտին են խոսում Լենինգրադի Էրմիտաժում գտնվող Ծերունի մյուս ձեռագրի նկարազար-

[15] Ավետարան Մատթեոսի, ԻԷ 24:

[16] Анналов Д. В., Эллинистические основы Византийского искусства, Пет., 1900, стр. 70. Այս թեմայի մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում նաև Ն. Պ. Կոնդակովը (История Византийского искусства и иконографии по миниатюрам греческих рукописей, Одесса, 1876, стр. 80).

[17] Ծունունը Աֆոնո-Պանտելեյմովյան վանքի № 2 Ավետարանում (Кондаков Н. П., Очерки памятников Христианской иконографии и искусства, Петербург, 1900, рис. 81, 82).

ռումները: Այդ ձեռագրի և ոչ մի էջում, ոչ մի թեմայում մասնատման եղանակը կիրառություն չի գտել: Հավանաբար այն պարզ պատճառով, որ այդ ձեռագիրն ունի հարեմատաբար մեծ չափեր՝ 32×22:

Նկ. 4. Ս. Գրիգոր Նարեկացի

Ծերունի մանրանկարների հորինվածքային կառուցման առանձնահատուկ կողմը հանդիսանում է էջի խելամիտ, ռացիոնալ օգտագործումը՝ համակցված ֆիգուրների ոիթմիկ դասավորության և ճակատային ծավալվող տեսարանների հետ (նկ. 3): Կարող է թվալ, որ բոլոր դեպքերում նույն եղանակի կիրառությունը տաղտկալիություն ու միօրինակություն կբերի: Եվ իրոք, նման վտանգն այնքան էլ հեռու չէ Վասպուրականի մանրանկարիչներից: Սակայն մեր ծաղկողի մոտ, շնորհիվ առանձին մանրամասների գծանկարման դիպուկության և, մասնավորապես, ֆիգուրների խիստ արտահայտիչ շարժուձևով պատկերվող իրադրության, նկարի ներքին ուժը (դինամիկան) ակնառու է դառնում՝ ապահովվելով կենդանի համոզչականությունը: Դա ոչ միայն Ծերունի, թերևս Վասպուրականի մանրանկարիչներից շատերի աշխատանքներին «շունչ տվող» գործոն է:

Ծերունի մանրանկարներում ձևերի պարզ չափավորություն կա ինչպես ֆիգուրների փոխհարաբերության, այնպես էլ նրանց մանրամասների միջև: Իսկ երբ այդ ամենը հասցվում է առավելագույն «խտությունի» ուժի, որպիսին արտիստականության հասնող դիմախաղերն ու ձեռքերի շարժումն է, ապա տեսարանները այնքան հասկանալի ու պարզ են դառնում, որ դիտողը այլևս չի ուզում հանդիպել ավելորդ պաճուճանքների: Այդ որակները երևակում են մի յուրատիպ աշխարհ իրենց ճիշտ ու կացով, բնավորությամբ, ասելիքով...

Նկարիչը չի ջանում նրբացված (ռաֆինացված) ձևերի: Թող փոքր-ինչ անվարժ լինի գծանկարը, թող ձևերի պատկերման մեջ որոշ անճշտություններ ու շեղումներ լինեն, կոպիտ, երբեմն անխնամ դրված գույներ, դա հոգս չէ նրա համար, միայն թե միտքը դիպուկ արտահայտություն ստանա: Ահա այս դեպքում միայն նկարները ծառայում են հեղինակի միտմանը՝ ոչ միայն ընթերցողներին, այլև կարդալ չիմացող հասարակայնության ամենալայն խավերին պատկերային պարզ միջոցներով հաղորդակից դարձնել Հիսուսի կյանքին ու մեծ առաքելությանը:

Գունաշարը՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին, քննարկվող մանրանկարներում կազմված է բավականին վառ, բայց ոչ միշտ մաքուր տոներից, որոնց բնորոշ է դառնում փոքր-ինչ խայտաբղետությունն ու դեկորատիվայնության հակումը:

Ավետարանական հաջորդական նկարաշարից զատ Ծերունի աշխատանքներում հատուկ տեղ են գրավում դիմանկարները՝ Գրիգոր Նարեկացու (Մատ. №№ 1874 և 4988 ձեռագրեր), ստացողի՝ Սիմեոն քահանայի և նրա որդու՝ Աստվածատուրի (Մատ. № 1874 ձեռ.) և վերջապես իր հայտնի ինքնանկարները (Մատ. №№ 8772, 4777 ձեռագրեր և 1101 պատառիկն ու Էրմիտաժի VP—1010 ձեռագիրը):

Այս պատկերները թերևս ոչ այնքան անհատական-պորտրետային, որքան ճանաչողական-գեղանկարչական արժեք ունեն: Տպավորիչ են հատկապես Գրիգոր Նարեկացու դիմանկարները (նկ. 4). հասարակ պարզ ձևերով, գունային զսպվածությամբ նկարիչը պատկերել է միջնադարյան մեծ մտածողի ու քնարերգուի խոհական կերպարը: Նրա հանդիսավոր կեցվածքի մեջ կա ներքին արտահայտչականություն:

Մյուս դիմանկարները (նկ. 5) ավելի շատ կենցաղային-ճանաչողական նշանակություն ունեն՝ տարազի, դիմային բնորոշման, գործածության առարկաների առումով:

Ավետարանիչների դիմանկարները և ան-

վանաթերթերը վասպուրականյան սովորույթների շարունակությունն են[18]:

Խորանի վերին քառանկյունների ծայրերում հանդիպում են բուսական գալարաձև զարդեր, որոնք հատկանշական են XIII—XIV դարերին: Խոյակների ու հիմքաստիճանների (խարիսխ) վրա սովորական հյուսածո զարդեր են՝ ավելի արևելյան մոտիվների նմանությամբ: Սյուների վրա երբեմն օգտագործվում են հովհարաձև զարդեր և կամ ոճավորված շուշաններ, որոնց կրկնվող հաջորդականությունները ստեղծում են նշենու տերևների նմանակներ: Հարդարանքի այս ձևը, ինչպես նաև կամարներում ռումբաձև ծիածանազարդերը, բնորոշ լինելով վաղ շրջանի հայկական ձեռագրերին, Վասպուրականի համար դառնում են տիպական:

Բազմաթիվ գրաֆիկական լուսանցազարդերը մեծ մասամբ վարդագույն ու կապույտի երանգներով են ներկված: Դրանցում օգտագործված են և՛ բուսական մոտիվներ, և՛ կենդանական՝ եղևնահիներ, արծվաոյուծատեսք գազաններ, եղջերուներ, որոնք մեծ մասամբ տրված են բուսական մոտիվների հետ համակցված: Ճարտարապետական մոտիվներ սակավադեպ են հանդիպում:

Նկ. 5. Ինքնանկար

[18] Տես մեր «Սիմեոն Արճիշեցին Վասպուրականի մանրանկարչական դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչ» հոդվածը («Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 297—320):

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա) Ց Շարականներ № 229։
(Պահպանակի վրա) Ցրթ. Ան.ատուրեան,
Երուսաղէմ, 1891.
Նուէր Հայաստանի
իր որդւոյն Արմենակ Ասատուրեանի կողմանէ։
Նիկոսիա, Կիպրոս, 1969։
Թ. 253ա.—Պետրոս.
Գաղտնիք և արուեստ մոգութեան
թիւ Արևելքի 1909
Թթ. 259ա և 260ա.—Ցուրաքանչիւր թերթում կա մեկական երկրաչափական գծագրություն։

№ 921

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 250։—Պրակները՝ 1+20=21, յուրաքանչիւրը 12 թերթից, բացի՝ Ի՝ 9, Ա, ԺԷ, ԺԸ՝ 11, Բ՝ 14, և մի պրակ Էլ՝ 14 թերթից Հավելվածական կա ձեռագրի սկզբում։—Մեծությունը՝ 21,7×16,5×6,5 սմ.։—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—Կազմը՝ կաշեպատ տախտակ։—Պահպանակները՝ սկզբում կա մի թերթ թուղթ, որ կպցված է կազմին։ Թղթի վրա գունավոր նկարված է հասարակ երեք դիմագիծ։—Վիճակը՝ անբավարար։—Գրությունը՝ երկսյուն։—Դատարկ թղթերը՝ 14բ։—Տողերը՝ 21—22։—Գծումները՝ ճշգումով։—Գիրը՝ բոլորգիր։—Զարդագրությունը՝ ձեռագրի մանրանկարչությունը հատարակ ոճ ունի։ Գրքի սկզբում կան 14 էջ զանազան նկարներ առնված Հիսուսի կյանքից, երբեմն լրիվ էջի, երբեմն էլ կեսական էջի ծավալով (թթ. 1բ—8ա)։ Ապա կան 10 էջ խորաններ (համաբարբառ) թթ. 9բ—14ա։ Ձեռագրում կան երեք ավետարանիչների նկարները ամբողջական էջի ծավալով (թթ. 15բ, 127բ, 197բ)։ Կան չորս կիսախորաններ (թթ. 16ա, 85ա, 128ա, 198ա)։ Ձեռագիրն ունի հասարակ ոճով նկարված զարդագրեր, թռչնագրեր, մարդագրեր և գազանագրեր, ինչպես նաև լուսանցազարդեր, թռչուններ, կենդանիներ, զարդեր, սրբեր, գլուխներ և մարդագլուխ թռչուններ։—Գրիչը՝ Վարդան Կատակոնց։—Պատվիրատուն՝ Վարդան սարկաւագ Տիր։—Ծաղկողը՝ անհայտ։—Ժամանակը՝ 1886 թ.։—Վայրը՝ Արծկե (Բզնունյաց գավառ)։—Մանրամասնությունը՝ Մայր Աթոռի Ձեռագրատունը 1988 թ. հունիսի 10-ին նվեր է ստացել սույն ձեռագիրը երևանաբնակ հայրենադարձ Լուսիկ անունով մի բարեպաշտ օրիորդի կողմից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 248բ.—Փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոյ որոյ շնորհաբեր աւարտեցաւ եռանիրաշ ե հոգիազարդ վարդապետիթ բուրաստան աւետարանս, զոր շաղկապեալ հրաձեալ աւետարանչացն ըստ բազմերանգ գունոցն ի մի ոստան անգելով հաճար. զոր արեստ անգեալ անուշուացաց ծաղկանց իւղ եթիեղական կազմութեամբ որ ըստ հոգոյն յատկութեան իմանի զանազան որակութեամբ գաղաբարելով ըստ ոքունց արփիացելոց զի յայսմանէ կատարելութեան չորս աւետարանքս ի բազում պատճառէ, չորեքկերպեան կենդանիք մարդ, առիւծ, եզն, արծիւ։ Չորս նիւթ աշխարհիս՝ հող և ջուր, աւդ և հուր։ Թշնամիք անհաշտելիք և սիրելիք անքակտելիք։ Չորս չորք գիրք անուն ամենասուրբ Երրորդութեան՝ Հայր, որդի, հոգի։ Չորս գետ բղխեալ ի դրախտէն Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէզ։ Չորս անկիւն չորս եղջիւրք սեղանոյն, չորս դէմք սրբոյ խաչին, չորք առաք (թ. 249ա)-իմութիւն, հոգոյ՝ խոյեմութիւն, արիութիւն, օղջախոյութիւն և արդարութիւն։ Չորս ծագ տիեզերաց՝ արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ։ Չորս բանք աւետարանին՝ պատգամ և պատուիրան, սպառնալիք և աւետիս։ Չորս բանիւ խօսի աւետարանս հրամանաւ և խրատով օրինակաւ և վկայութեամբ և այլ բազում պատճառք են չորս գաղափարին չորեքեան աւետարանքս։ Եւ ես յետին բանասիրաց և կոխան ամենայն կարդացողաց և կարգաւորաց սուտանուն անպիտան մեղօք լցեալ և ապականեալ. Վարդան ստրուկ և փծուն գրիչս (եւ գրէ) որ մականուն Կատակոնց ասեն գրեցի զհոգիաշաղ և հոգիազարդ տառս յիշատակ վա-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1984 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1985 թվականի №№ Ը—Ժ-ից, 1988 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Գ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից և Ը-ից։

յիշողացը: Եւ գրեցաւ սա ի թվականութեանս Հայոց ՌՄԽԵ (1886 թ.—Ն. Մ.) ամին, ի Հայրապետութեան տեառն Նահապ(ե)տ կաթողիկոսի, ի մերոյս ներհանգի Վարդան պարոն Տիրի, ի գաւառն Բզնունեաց, որ այժմ կոչի Արծկէ, որ թուրքի գրի բառով Մկթաւ աղաց ասեն: Արդ որք հանդիպիք սուրբ աւետարանիս տեսութեամբ կամ ընթեռնելով կամ գալապար առն(ե)լով ի պէտս օրհնակի յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք փեռուն Վարդան գրչի և իւր ծնողացն՝ Հօրն Տէր Աւետիս քահանային, և մօրն Հալինարին, ամէն: (Թ. 249բ) Որոյ ցանկացող եղեալ և շարժեալ ի սէր աստուածային գանձուցս և ջանաց ստանալ զանառիկ մեծութիւն և զգանձս անկողոպտելի ի վայելումն անձին իւրոյ և հոգւոյ յիշատակ ծնողացն ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում անջատ թղթի վրա գրված է)

Ցեռագիր Ավետարան, նվեր ս. Էջմիածնի վանքին բարեպաշտության մի ոմն օրիորդի կողմից, Նարեկ վրդ.-ի միջոցով: 10-8-1966 թ.:

Թ. 1ա.—Սուրբ Ծաղիկ Աւետարան: (Սույն էջում կա տասը տող նոտրգրով գրված անընթեռնելի մի գրություն):

Թթ. 8բ և 9ա.—(Նոտրգրով գրված աղոթք և մաղթանք):

Թ. 15ա.—Ալաշկիրտ, Մանկասար գիւղացի Տ(էր) Սիմոն Տ(էր) Սիմոնեան ձեռնադրեալ Սուրբ Կարապետի վանքս

Թ. 184ա.—Ով եղբայր ղալատեցա

Թ. 249բ.—Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք հնգաձոգի պարոն Սարգսին, եղբարցն Զաքարին, Մելքոնին, Սարգսի որդոյն Եղոյին, կողակցուն Եղիսին, որդուն Փիրդինմալ խանին, Եր...ուլին, Խլղադին, Նուպարին ... իւրեանց ...եան մերձաւորաց մեծին և փոքրուն: Որ աշխատաք կալ Աստուած գիւրեանց մեղքն թողու ամէն: Դարձեալ յիշեցէք զպարոն Սարգիսն, զհայրն Միրզեն, մարն Ղարիպն ամէն:

Թթ. 250ա. և 250բ.—(Վերոհիշյալ անունները կրկնվում են):

№ 322
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 252:—**Գրակները՝** 22, **յուրաքանչյուրը** 12 թերթից, բացի ԻԲ՝ 2, Ա և Ե՝ 11:—**Մեծությունը՝** 21×16,5×3,5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ—**Գաղափանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ սպիտակ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 88բ, 118բ, 192բ, 251բ, 252ա և 252բ:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի գեղեցիկ ոճով մանրանկարչություն: Կան չորս կիսախորանաձև (թթ. 2ա, 69ա, 114ա և 198ա), ինչպես նաև բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր, թռչուններ, գմբեթներ, խաչեր, վառվող մոմեր (թ. 67ա), մարդագլուխ թռչուններ, բույսեր և ծաղիկներ: Ձեռագիրն ունի նաև գեղեցիկ զարդագրեր, թռչնագրեր, գազանագրեր և մի հատ մարդագիր (թ. 2ա):—**Գրիչը՝** Անանիա արեղա:—**Պատվիրատուն՝** Ստեփանոս քահանա:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1469 թ.:—**Վայրը՝** Հերմոնի վանք:—**Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է նվեր Լենոնոնից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 249բ.—Փառք անեղ բանին Աստուծոյ, որոյ ի միում կատարեալ առանձնաւորութեամբ և միաւորեալ ըստ աստուածութեան եռահրաշ, անքաժանելի և անքակ տէրութեան միասնական սուրբ Երրորդութեան կրկնեալ փառք ի գոից բնաւից յիմանալեաց և ի սգալեաց:

Գնագրնքաւ վանական անքաղդատելի, աստուածունակ, արփիահրաշ, գերափայլ և տիեզերալուր չորեքծագեան կտակս որ հանապազ հնչէ ի լսելիս. Քրիստոսի հաւատացեալ ժողովրդեանդ յաղագս փրկութեան աշխարհի և արքուցանէ և կերակրէ զչարս կենդանական և զհացն անմահական յնդեմեան վտակացն ընդ քառանգիւն ոլորտս տիեզերաց, ի զուարճումն և ի պարարումն զովաբութեան, պասքեալ և կարաւտեալ ժողովրդեան: Եւ է սա ուրախութիւն տրտմեցելոց, բժիշկ հիւանդաց, քաւիչ մեղաւորաց, լոյս խաւարելոց, դաստիարակ մանգանց, սփոփանք երիտասարդաց, հաստատութիւն ծերոց, կենդանութիւն մահացելոց, սրբիչ ամենայն ախտից, սաւսափումն և հալածիչ դիւաց (թ. 250ա) և նորին, և անմահութիւն կենդանութեան պարգևեսցէ ամենեցուն որք հաւատով և յուսով դիմին ի սա և կատարեսցէ Քրիստոս ի ձեռն հրամանիս իւրոյ ամենեցուն, թէ որ խնդրէ առնու, և որ հայցէ գտանէ, և որ բախէ բացցի նմա:

Եւ արդ գրեցաւ սա ի թուականութեանս հայոց ՋԺԸ (1469 թ.—Ն. Մ.), ի հայրապետութեանս Տեառն Ղոբստակէսի: Գրեցաւ սուրբ աւետարանս ի վանքս Հերմոնի ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչին, և Սուրբ Յակոբիս, և Սուրբ Ստեփանոսիս, և սուրբ վարդապետացս, որ աստ կան հանգուցեալ և ի յառաջնորդութեան Սարգիս բարունապետին:

Ձեռամբ սուտյանուն Անանիեան գրչի, որ անուամ(բ)ս միայն խաբեղա և ոչ գործով: Արդ ամենայն որ բարոյ ցանկայ վասն սիրոյ արքայութեան, որպէս ասէ առաքեալն. թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոնի և ընդան ի Երուսաղէմ: Ես Ստեփանոս քահանայս ստացայ Սուրբ Աւետարանս և ետու գրել զսայ յիշատակ իմոյ և ծնողաց իմոց, հարն իմոն Ամիրին, և մարն իմ Թաճիկին, և հարեղբարն իմ Մնրտչի կուսակրաւն արեղայի, և կողակցին Խրմարթին, և որդին իւր Յակոբ, Ալէքսանոս, Գրիգոր, Արիստակէսն, (թ. 250բ) և զդուստրն իմ զՄարգարիտն, Նուկպարն, և զքոյրն իմ Նուրմէղիք, զՀուփսիմէ, և զամենայն արեան մերձաւորսն, զկենդանիսն և զհանգուցեալսն, և Աստուած որ առատն է ի տուրս ողորմութեան. ձեզ յիշողաց և մեզ յիշելոցս ողորմեսց(ի) իւր միւս անգամ գալըստեամբն ամէն և եղիցի:

(Ծարունակելի)

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐԻՑ

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1974 թվականի հունվարի 23-ին Բաղդադում պապական նվիրակի արքեպիսկոպոսարանի դահլիճում տեղի է ունեցել էկումենիկ աղոթք՝ մատուցված եկեղեցիների միությանը: Սույն էկումենիկ աղոթքին նախագահել է պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպը: Համատեղ աղոթքի արարողությանը մասնակցել են Իրաքի քրիստոնեական բոլոր համայնքները իրենց հոգևոր պետերով:

Հայ եկեղեցու կողմից էկումենիկ աղոթքին ներկա է եղել Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը՝

Պապական նվիրակ մոնսենյոր Ժան Ռյուպը և Իրաքի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանը

ընկերակցությամբ Բաղդադի հայոց քահանայից դասի և համայնքի ներկայացուցիչների, այդ թվում՝ տ. Գեղամ ավագ քհն. Փաշայանը, պարոնայք Ավետիս Գասապյանը, Սարգիս Ջյուլեմյանը, Գրիգոր Բորդոյանը, տիկնայք Արաքսի Գասապյանը, Օռեն Ստեփանյանը, օրիորդ Արաքսի Արաթունը և ուրիշներ:

Հայ եկեղեցու ներկայացուցիչները մայրենի լեզվով աղոթել են Քրիստոսի ընդհանրական եկեղեցու միության և աշխարհի բոլոր քրիստոնյաների եղբայրության և աշխարհի խաղաղության համար:

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՑ ԵՎ ԿԱՆՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Բ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿՐԵՏԵՈՒՄ

1973 թվականի սեպտեմբերի 26—30 օրերին Կրետեի մայրաքաղաք Խանտիայում տեղի է ունեցել Օրթոդոքս (Արևելյան) եկեղեցիների իրավանց և կանոնագիտական ընկերության Բ համաժողովը, որին մասնակցել են մոտավորապես 100 գիտնականներ՝ բազմաթիվ երկրներից: Որպես հիշյալ ընկերության կենտրոնական հանձնաժողովի խորհրդական անդամ, համաժողովի աշխատանքներին իր մասնակցությունն է բերել նաև Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Համաժողովի օրակարգի գլխավոր հարցն է եղել «Սինոդները ըստ իրենց աղբյուրների և նրանց կիրառությունը ներկա կացության մեջ»:

Օրթոդոքս եկեղեցիների սույն կանոնագիտական ընկերությունը կազմված է 1968—1969 թվականներին՝ կենտրոն ունենալով Վիեննա քաղաքը: Այժմ ընկերության նախագահն է Վիեննայի համալսարանի եկեղեցական կանոնագիտության հայտնի պրոֆեսոր դոկտ. Վիլհելմ Պլոխելը: Ընկերության Ա համաժողովը տեղի է ունեցել 1971 թ. սեպտեմբերին Վիեննայում:

Երկու համաժողովներն էլ զուտ գիտական և ուսումնասիրական հանդիպումների բնույթ ունենալով՝ նրա մասնակիցները ժողովներին մասնակցում են անհատապես, առանց պաշտոնական հանգամանքի, և հետևաբար որևէ իրավասություն չունեն եկեղեցիների անունից որոշումներ ընդունելու:

Ներկա համաժողովում ուսումնասիրության նյութ են դարձել տիեզերական և այլ տեսակի սինոդները և նրանց կապակցությունը քրիստոնեական եկեղեցիների կանոնական կազմակերպություններին: Առանձին զեկուցումներով հանդես են եկել եկեղեցական իրավունքի և կանոնագիտության մասնագետ դասախոսներ: Համաժողովի կարևորագույն բանախոսություններն են եղել.

ա) «Տիեզերական ժողովները որպես եկեղեցու բարձրագույն հեղինակություն» (զեկուցող՝ Պյոտր եպս. Կերսոնի, ռուս պրավոսլավ եկեղեցուց).

բ) «Տեղական սինոդները ըստ աղբյուրների և նրանց այժմեականությունը այսօր» (զեկուցող՝ պրոֆ. Ռոնե Լոգրան, հռոմեական կաթողիկե եկեղեցուց).

գ) «Եպիսկոպոսական սինոդներ և կղերա-աշխարհական համագումարներ» (զեկուցող՝ դոկտ. Վիլհելմ Պլոխել, հռոմեական կաթողիկե եկեղեցուց):

դ) «Արևելյան կաթողիկե եկեղեցիների սինոդները և Հռոմի Եպիսկոպոսը» (զեկուցող՝ հույն կաթողիկե եկեղեցու վարդապետ պրոֆ. Ժոզեֆ Հաջջար):

Համաժողովի վերջին օրը, կազմակերպիչ հանձնաժողովի կարգադրության համաձայն, առավոտյան, նիստին նախագահել է տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և ղեկավարել ասուլիսները:

Համաժողովը որոշել է իր հերթական՝ Գ համագումարն անցկացնել 1975 թվականին:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԲՈՒԼԳԱՐԻԱՅՈՒՄ

Բուլգարիայի օրթոդոքս եկեղեցու ս. Սինոդի հրավերով 1973 թվականի նոյեմբերի 25—30 օրերին Սոֆիայում տեղի է ունեցել Ե. Հ. Խ.-ին առընթեր Փոխօգնության ու ծառայության և գաղթականների օժանդակության միջազգային հանձնաժողովի հերթական նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցել են շուրջ 40 երկրներից ժամանած 70 պատգամավորներ, դիտորդներ և եկեղեցիների, էկումենիկ խորհուրդների ու եկեղեցական օգնության մարմինների ներկայացուցիչներ:

Նոյեմբերի 25-ին Սոֆիայի Ալեքսանդր Նևսկի տաճարում և մայրաքաղաքի տարբեր դավանությունների եկեղեցիներում տեղի են ունեցել արարողություններ, որոնց ընթացքում հյուրընկալները ու հյուրերը արտասանել են քարոզներ և փոխանակել ողջույնի խոսքեր:

Լիագումար նիստերին, որպես հյուր, մասնակցել են բոլոր սոցիալիստական երկրների քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները, որոնց հետ հանձնա-

ծողովն ունեցել է առանձին հանդիպումներ Արևելյան Եվրոպայի միջեկեղեցական օժանդակության հարցի շուրջ՝ արդյունավետ ավարտով:

Հանձնաժողովը վավերացրել է 3,5 միլիոն դոլլարի անհապաղ օգնության ու երաշտի մատնված արևմտյան Աֆրիկայի Սահիլյան գոտու զարգացման մասին երկարաժամկետ աշխատանքի կոչը, որ եկեղեցիներին ուղղվել էր անցյալ տարվա սեպտեմբերին: Հանձնաժողովը որոշել է նաև շտապ խորհրդակցություններ կատարել եթովական ուղղափառ եկեղեցու ոստ՝ հյուսիսային Եթովպիայի սովին պատշաճորեն արձագանքելու համար:

Հանձնաժողովի օրակարգի կարևոր հարցերից մեկն է եղել Չիլիի գաղթականների վիճակի հրատապ հանգամանքը: Ենթադրված 13.000 չիլիացի գաղթականներից 4000-ն արդեն ընդունվել են եկեղեցիների կողմից ստեղծված Չիլիի գաղթականների ազգային կոմիտեի կողմից: Երկրից հեռանալու նրանց պայմանաժամն է եղել 1973 թ. դեկտեմբերի 31-ը: Հանձնաժողովը կարիք ունի 300.000 դոլլարի հավելվածական մի գումարի՝ նախատեսված 13.000 չիլիացի գաղթականների ընդունման և համապատասխան երկրներում վերաբնակեցման ծրագրի իրականացման համար:

Հանձնաժողովում քննարկվել է նաև Հնդկաչինի վերականգնման ու հաշտեցման ֆոնդին ի նպաստ եկեղեցիների կողմից 2,5 միլիոն դոլլարի հայթայթման հարցը: Հանձնաժողովը ուրախությամբ է ընդունել այն տեղեկությունը, ըստ որի վերոհիշյալ ֆոնդը արդեն թողարկել է 2 միլիոն դոլլար հյուսիսային Վիետնամում մի հիվանդանոցի կառուցման և կահավորման համար:

Հանձնաժողովը վավերացրել է Հարավային Աֆրիկայի ազատագրության շարժման օգնության ծրագիրը, որը նախատեսում է դեղերի, կրթական պիտույքների և երկրագործական կարիքների հայթայթումը:

Հանձնաժողովը միաժամանակ նշել է, որ «Սիկարուս»-ի ընդհանուր եկամուտը ավելացել է ավելի քան 5 անգամ՝ 1960 թ. 5 միլիոն դոլլարից 1973 թ. բարձրանալով 22,9 միլիոն դոլլարի:

Մնացած ձեռնարկումների կապակցությամբ հանձնաժողովը համաձայնել է, որ քարտուղարությունը մինչև հաջորդ նստաշրջանը շարունակի իր աշխատանքները՝ սերտ հարաբերություն պահպանելով հանձնաժողովի նախկին տնօրեն դոկտ. Ալան Ա. Բրաշի հետ, որը վերջերս Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղարի տեղակալ նշանակվեց:

Նոյեմբերի 25-ին, ի պատիվ ժողովականների, Մաքսիմ Պատրիարքը և Բուլղարիայի օրթոդոքս եկեղեցու ս. Սինոդը կազմակերպել են պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Պատրիարքն իր բարձր գնահատանքն է արտահայտել էկումենիկ շարժման արդյունավետ գործունեության նկատմամբ՝ միաժամանակ հայտնելով իր սրտագին շնորհակալությունը Ե. Հ. Խ.-ի կողմից բուլղարական եկեղեցուն ցույց տրված օժանդակության համար: Բուլղարիայի եկեղեցական գործերի մինիստրը նույնպես իր ելույթում գնահատանքի խոսք է ասել միջազգային խաղաղության և ժողովուրդների բարեկամության ի նպաստ Ե. Հ. Խ.-ի ծավալած գործունեության մասին:

Նոյեմբերի 29-ին հանձնաժողովի ղեկավարությունը փոխադարձ ընդունելություն է կազմակերպել հանուն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի: Սույն ընդունելություններին ներկա է եղել Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ քահանա Բեն-լիյանը:

Սոֆիայում գտնվելու օրերին հանձնաժողովի անդամները այցելել են Ռիլայի, Բաչկովոյի և Շիպկայի վանքերը, բազմաթիվ տաճարներ և տեսարժան վայրեր:

Համաժողովի ընթացքում կայացած դիալոգները երևան են բերել հուսադրիչ հեռանկարներ էկումենիկ գործակցության, որն, անտարակույս, կնպաստի Արևելքի և Արևմուտքի միջև, մասնավորապես Եվրոպայի ցամաքամասի վրա, հարաբերությունների դրական զարգացմանը:

Հանձնաժողովի ղեկավարությունը լրագրողների, ռադիոյի ներկայացուցիչների և եկեղեցական գործիչների հետ ունեցած տեսակցության ընթացքում իր գոհունակությունն է հայտնել Սոֆիայի միջեկեղեցական սույն հանդիպման առթիվ և վկայել բուլղարական եկեղեցու ու պետության միջև բնականոն հարաբերությունների և երկրում կրոնական դավանությունների ազատության մասին:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ԿԱՀԻՐԵՈՒՄ

Սույն թվականի հունվարի 16-ին Ալեքսանդրիայից Կահիրե են ժամանել տ. Զավեն եպս. Չինչինյանը և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյանը՝ եղբայրական հանդիպում ունենալու ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Տ. Պիմեն Պատրիարքի և նրա շքախմբին մաս կազմող ռուս բարձրաստիճան հոգևորականների հետ, որոնք Մոսկ-

վայից Ադիս-Աբաբա իրենց ուղևորության ընթացքում կանգ են առել Կահիրեում:

Տեղի «Շերաթոն» հյուրանոցում, ուր մի քանի օրով իջևանել է ռուս եկեղեցու պատվիրակությունը, Տ. Պիմեն Պատրիարքի հետ ուշագրավելուց հետո, պաշտոնական իրադրության մեջ, տ. Զավեն եպս. Չինչինյանը, հանուն Հայց. եկեղեցու և նրա գահակալ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի, ողջունել է ռուս եկեղեցու Հովվապետի բուրեբաստիկ և օրհնաբեր գալուստը եգիպտական հողի վրա՝ ասելով. «Ձերդ Սրբության գալուստը զուգադիպում է Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման որոշումների սկզբնավորմանը»: Այս առթիվ իր խոսքի մեջ տ. Զավեն սրբազանն անդրադարձել է հայ և ռուս ժողովուրդների ու եկեղեցիների միջև հաստատված եղբայրական դարավոր կապերի մասին՝ ջերմ մաղթանքներ անելով այդ կապերի հետագա առավել խորացման և սերտացման համար:

Տ. Պիմեն Պատրիարքն իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնել հայ եկեղեցու ներկայացուցիչներին բարի գալուստի սույն այցելության համար և իմանալով, որ տ. Զավեն եպիսկոպոսը նոր է վերադարձել ս. Էջմիածնից, հարցրել է Ամենայն Հայոց կաթողիկոսի առողջության և Նրա եկեղեցաշեն գործերի մասին:

Այս առթիվ ռուս եկեղեցու պատվիրակությանը ողջունելու համար «Շերաթոն» հյուրանոց են այցելել նաև ղպտական եկեղեցու Պատրիարք Շենուդա Գ-ը՝ իր շքախմբի հետ, և Պողոս Զ Պապի ներկայացուցիչ, պապական նվիրակ մոնսենյոր Հաշիլ Գլորիոն:

Հյուրանոցում Տ. Պիմեն Պատրիարքը երեկոյան ընթրիքի է հրավիրել քույր եկեղեցիների ներկայացուցիչներին: Ընթրիքի ժամանակ հառեր են փոխանակվել ներկաների միջև էկումենիկ ոգով: Առիթից օգտվելով Շենուդա Պատրիարքը բաժակ է առաջարկել Հայց. եկեղեցու Հովվապետի կենաց արևշատության և հայ եկեղեցու բարեզարդության համար: Ապա պատմել է Երևանից, ս. Էջմիածնից և առհասարակ Սովետական Հայաստանից իր կրած ջերմ տպավորությունների մասին: Ի պատասխան Շենուդա Պատրիարքի ողջույնի խոս-

Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը, պապական նվիրակ մոնսենյոր Հաշիլ Գլորիոն և տ. Զավեն եպս. Չինչինյանը

քի, տ. Զավեն եպիսկոպոսը, հանուն Հայոց Հայրապետի, շնորհակալություն է հայտնել Շենուդա Պատրիարքին եղբայրական ջերմ խոսքերի համար և փոխադարձաբար բաժակ առաջարկել Շենուդա Պատրիարքի կենաց և դպտական քույր եկեղեցու ու նրա հավատացյալ ժողովրդի բարօրության համար:

Ընդունելության ընթացքում տ. Զավեն սրբազանը խնդրել է Տ. Պիմեն Պատրիարքին, որ բարեհաճի Ադիս-Աբաբա իր այցելության ընթացքում Հայոց Հայրապետի ողջույնները հաղորդել Եթովպիայի Պատրիարք Թեոֆիլոսին և քրիստոնեական հավատի պաշտպան Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե կայսեր:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ԳԼԵՆ ԳԱՐՖԻԼԴ ՎԻԼՅԱՄՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումին պատրիարքարանի հրավերով սույն թվականի հունվարի 21-ին պաշտոնական այցով Բուխարեստ է այցելել Ե. Հ. Խ.-ին առընթեր Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը:

Հարգարժան հյուրը, որին ուղեկցել է 20 հոգուց բաղկացած մի պատվիրակություն, հանդիպումներ է ունեցել ռումին օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչների հետ և այցելել Ռումինիայի մի շարք հոգևոր հաստատություններ, ինչպես նաև կրոնական ու աշխարհիկ մշակութային կենտրոններ:

Այս առթիվ Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը հանդիպում է ունեցել մեծարգո հյուրի հետ և տեղեկություններ հաղորդել նրան Ռումինիայի թեմի կրոնական կյանքի վերաբերյալ:

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի հունվարի 30-ին ս. Բարսեղ, ս. Հովհաննես Ոսկեբերան և ս. Գրիգոր Աստվածաբան հայրերի տոնակատարության օրվա առթիվ Բուխարեստի աստվածաբանական ինստիտուտի եկեղեցում տեղի է ունեցել տարեկան հանդիսավոր արարողություն: Մատուցվել է ս. պատարագ և կատարվել հոգեհանգստյան պաշտոն՝ ինստիտուտի հանգուցյալ դասախոսների և ուսանողների հոգվոց խաղաղության համար:

Նույն օրը, կեսօրին, ինստիտուտի հանդիսությունների դահլիճում տեղի է ունեցել պաշտոնական հանդիսություն, որին ներկա են եղել տ. Ռոման և տ. Անտոն եպիսկոպոսները, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը, ինչպես նաև բազմաթիվ հոգևորականներ, ինստիտուտի նախկին և նոր դասախոսներ ու հյուրեր:

Հանդիսությանը հրավիրվել են նաև Բուխարեստի բուլղարական եկեղեցու ավագերեց տ. Նիկոլայ Գորանով քահանան, Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը և ռումինական եկեղեցու կրոնից նախարարի տեղակալ պրոֆ. Գեորգե Նենչյուն:

Օրվա տոնի առթիվ բանախոսությամբ հանդես է եկել ինստիտուտի ավագ պրոֆեսոր տ. Դումիտրու Ռադուն, որը ոգեկոչել է Կապադովկյան հայրերի անունն ու գործունեությունը՝ վեր հանելով նրանց կատարած մեծ դերը Դ դարում, քրիստոնեության հաղթանակի համար, որպես քաջ աստվածաբաններ, մեծ մարդասերներ և մեծ հոգևորականներ:

Հանդիսության վերջում փակման խոսքով հանդես են եկել դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը և պատրիարքի փոխանորդ տ. Անտոն եպիսկոպոսը, որը, հանուն Ժուստինիան Պատրիարքի, ներկաներին տվել է իր օրհնությունը:

Հավարտ հանդիսության, ի պատիվ բոլոր ներկաների, տրվել է պաշտոնական ճաշկերույթ:

ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՆԵՎԻ ԿԵՆՏՐՈՆ

1973 թ. սեպտեմբերի 16—19-ը Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Պիմենը, ռուս պրավոսլավ եկեղեցու բարձրաստիճան մի շարք հոգևորականների ուղեկցությամբ, պաշտոնական այցով եղել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժնևի կենտրոնում:

Ռուսաց եկեղեցու պատվիրակությունը բազմակողմանի զրույցներ է ունեցել Ե. Հ. Խ.-ի անձնակազմի ղեկավար աշխատակիցների հետ, որոնց գլխավորել է Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթրը:

Զրույցները, որոնց ընթացքում շոշափվել են ընդհանուր հետաքրքրության և մտահոգության առարկա հանդիսացող մի շարք հարցեր, անցել են բարեկամական մթնոլորտում: Մեծ ուշադրություն է դարձվել Ե. Հ. Խ.-ի կյանքում ռուս պրավոսլավ եկեղեցու մասնակցության ընդլայնման, ինչպես նաև էկումենիկ շարժմանը օրթոդոքս եկեղեցիների բերած նպատակի հարցին:

Պիմեն Պատրիարքը այն կարծիքն է հայտնել, որ Ե. Հ. Խ.-ը պետք է մեծ ջանքեր գործադրի այն ասպարեզներում, որոնք անմիջականորեն վերաբերում են հավատացյալների հոգևոր կյանքի խնդիրներին և ի մասնավորի հավատուսուցման և դավանաբանության հետ կապված հարցերին: Համաձայնություն է ձեռք բերվել, որ այսուհետև ևս պետք է հատուկ ուշադրություն նվիրել Հալատո և կարգի հանձնաժողովի աշխատանքներին, առանձնապես այն խնդիրներին, որոնք վերաբերում են եկեղեցական միությանը: Կողմերը եկել են այն համոզմանը, որ եկեղեցիների միության մատուցվելիք ծառայությունը պետք է ներտորեն զուգակցվի ամբողջ մարդկությանը ծառայելու գործին: Բացի այդ, համաձայնություն է գոյացել, որ հարկավոր է ուղիներ գտնել ուժեղացնելու Ե. Հ. Խ.-ի աշխատանքը ի նպաստ խաղաղության և ժողովուրդների միջև համագործակցության:

Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղարը նշել է, որ աշխարհը անբաժանելի է և ընդգրկում է բոլոր մարդկային էակների ամբողջ կյանքը աշխարհի բոլոր մասերում. հետևաբար, մարդու իրավունքների, սոցիալական և ցեղային արդարության ապահովման և ճնշման բոլոր ձևերի վերացման մասին մտահոգությանը պետք է լինի անիրտրական և համընդհանուր:

Զրույցների ընթացքում հատկապես ընդգծվել է բոլոր եկեղեցիների գործունեության նշանակությունը մարդու իրավունքների պահպանումը ամենուրեք ապահովե-

լու հարցում: Ռուս եկեղեցու Հովվապետը շեշտել է ավելի լավ փոխըմբռնման, ավելի եղբայրական հարաբերությունների և իրար ճկատմամբ առավել մեծ վստահության անհրաժեշտությունը:

Ժենևում գտնվելու օրերին ռուս եկեղեցու պատվիրակությունը այցելել է Բոսեի էկումենիկ ինստիտուտը, ուր հանդիպում է ունեցել դասախոսական կազմի և ուսանողության հետ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԸ ԲԱԴ-ԶՈՂԵՆՈՒՄ

Հեսսեն-Նասաու երկրամասի ավետարանական-լութերական եկեղեցու հրավերով 1973 թ. հոկտեմբերի 16—19-ը Բադ-Զոդեն քաղաքում (Արևմտյան Գերմանիա) տեղի է ունեցել Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի նախագահության և խորհրդակցական կոմիտեի համատեղ նիստը:

Ե. Ե. Կ.-ի նախագահ Էռնստ Վիլմը և գլխավոր քարտուղար դոկտ. Գլեն Գարֆիլդ Վիլյամսը հանդես են եկել Ե. Ե. Կ.-ի աշխատանքների մասին հաշվետու զեկուցումներով ներկայացնելով միաժամանակ Եվրոպայում և ամբողջ աշխարհում քաղաքական արդի իրավիճակը:

Համատեղ նիստում նախագահությունը և խորհրդակցական կոմիտեն զբաղվել են 1974 թ. սեպտեմբերի 16—23-ը Էնգելբերգում (Շվեյցարիա) գումարվելիք համաժողովի նախապատրաստման հարցերով: Նիստի մասնակիցները անցկացրել են բանավեճեր միջազգային ժամանակակից հրատապ խնդիրների շուրջ:

Որպես եզրափակիչ փաստաթուղթ ընդունվել է նախագահության և խորհրդակցական կոմիտեի կողմից Ե. Ե. Կ.-ի անդամ եկեղեցիներին ուղղված մի հայտարարություն, որի մեջ նշվում են Չիլիի ողբերգական դեպքերը, և կոչ է արվում վերջ տալ արյունահեղությանը և չիլիացի ժողովրդի տառապանքներին: Հայտարարության մեջ նիստի մասնակիցները արտահայտել են իրենց միահամուռ կամքը այն մասին, որ Մերձավոր Արևելքի կոնֆլիկտը իր շուտափույթ քաղաքական լուծումը ստանա: Փաստաթղթում կոչ է արվել նմանապես Ե. Ե. Կ.-ի անդամ բոլոր եկեղեցիներին, որ բազմապատկեն իրենց ջանքերը հօգուտ անվտանգության և համագործակցության վերաբերյալ համաեվրոպական խորհրդակցության, ինչպես նաև խաղաղության և արդարության ձգտող այլ համատեղ գործողությունների:

Ե. Հ. Խ.-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏ. ԼԵՈՊՈԼԴՈ ՆԻԻԼՈՒՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի հրավերով 1973 թ. նոյեմբերի 13-ին Սովետական Միություն է ժամանել Ե. Հ. Խ.-ի միջազգային գործերի հանձնաժողովի տնօրեն դոկտ. Լեոպոլդո Նիիլուսը իր տիկնոջ հետ: Հյուրերը եղել են Մոսկվայում, Տալլինում, Լենինգրադում, Վլադիմիրում, Սուզդալում, ուր այցելել են օրթոդոքս և այլ դավանության պատկանող մի շարք եկեղեցիներ ու տաճարներ և ծանոթացել երկրի կրոնական, հասարակական և մշակութային կյանքին:

Սովետական Միությունում գտնվելու օրերին դոկտ. Լ. Նիիլուսը բազմաթիվ հանդիպումներ է ունեցել երկրի կրոնական գործիչների և հասարակության այլ ներկայացուցիչների հետ:

Նոյեմբերի 30-ին դոկտ. Լ. Նիիլուսին և նրա տիկնոջը ընդունել է ՍՍՀՄ մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Վ. Մանկարցևը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հունգարիայի եկեղեցիների էկումենիկ խորհրդի հրավերով սույն թվականի հունվարի 17—20-ը Հունգարիայում տեղի է ունեցել Խաղաղության համաքրիստոնեական միջազգային հանձնաժողովի նստաշրջանը, որը երկրորդն է Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի 4-րդ համաժողովից հետո:

Նստաշրջանին մասնակցել են 22 երկրներից ժամանած քրիստոնեական տարբեր եկեղեցիների 50 ներկայացուցիչներ:

Նստաշրջանի գլխավոր թեման է եղել «Խաղաղ գոյակցության քաղաքականության արդյունքները և եկեղեցիների ու քրիստոնյաների խնդիրները»:

Նստաշրջանը բաց է արել Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթը՝ ողջունելով բոլոր մասնակիցներին և նշելով տվյալ նստաշրջանում հանձնաժողովի առաջ դրված խնդիրները:

Հաշվետու զեկուցումով հանդես է եկել հանձնաժողովի նախագահ Գ. Դրեսը (Արևմտյան Գերմանիայից): Անդրադառ-

նալով անցած ժամանակաշրջանում կատարված աշխատանքներին՝ նա նշել է, որ առանձին ենթահանձնաժողովների կողմից քննության են առնվել Հնդկաչինի, Եվրոպայի անվտանգության, զինաթափման հարցերը: Մերձավոր Արևելքի ենթահանձնաժողովի նիստը, որը ծրագրված է եղել գումարել անցած աշնանը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում, տեղի չի ունեցել՝ այդ շրջանում սկիզբ առած ռազմական գործողությունների պատճառով:

Նստաշրջանում պատվիրակների միջև տեղի է ունեցել կարծիքների լայն փոխանակում: Քննարկումները կենտրոնացել են քրիստոնյաների և եկեղեցիների խնդիրների շուրջ, խնդիրներ, որ նրանց առաջ դրնում են խաղաղ գոյակցության դիալեկտիկան և ազգային ազատագրության համար մղվող պայքարը:

Մասնակիցները միահամուռ արտահայտել են խաղաղության համար պայքարելու իրենց կամքը՝ աստվածաբանությունը հակադրելով պատերազմի հոգեբանական մեթոդներին:

ՎԱՏԻԿԱՆԸ ՎԵՐԱՏԵՍՈՒԹՅԱՆ Է ԵՆԹԱՐԿՈՒՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԾԵՍԸ

Սույն թվականի փետրվարի 7-ին Վատիկանը վերատեսության է ենթարկել հռոմեական կաթողիկե եկեղեցու ապաշխարության խորհրդի ծեսը՝ այն վերածելու համար համայնական մի ծեսի, շեշտը դնելով ավելի հաշտության, քան խոստովանության վրա:

Վերոհիշյալ խորհրդին վերաբերող կանոնը, որ Պողոս Զ Պապի հավանությամբ հրատարակվել է Աստվածային պաշտամունքի սրբազան ժողովի կողմից, չի ջնջում անհատական խոստովանությունն ու արձակումը, սակայն թույլատրում է, որ անհատական խոստովանությունն ու արձակումը ներմուծվեն համայնական մի ծիսակատարության մեջ, ընդ որում ապաշխարողները պետք է միասնաբար ունկընդրեն սուրբգրական ընթերցումներ, ընդունեն իրենց մեղավորությունը և հայցեն Աստուծո ողորմությունը:

Բացի այդ, կաթոլիկ հավատացյալից պահանջվում է, որ տարին գոնե մեկ անգամ արձակում ստանա որևէ ծանր մեղքի համար: Համայնական արձակում շարունակվելու է տրվել առանձին դեպքերում, ինչպես, օրինակ, այն վայրերում, որտեղ կա քահանաների պակաս:

Համաձայն նոր ծեսի, «խոստովանություն» բառը շեշտը դնում է առավելապես մեղքերի ամբաստանության վրա և չի արտահայտում իմաստի այն ճոխությունը, որ ունի վերոհիշյալ խորհուրդը եկեղեցու կյանքում: Մինչդեռ «հաշտություն» բառը ավելի հստակորեն ցույց է տալիս, որ խորհրդակատարականի ապաշխարությունը համարվում է մի տեսակ **հանդիպում** Աստուծո և մարդու միջև:

Առանձնակի խոստովանության ձևը մնալու է նույնը, սակայն այն ճոխացվելու է Աստվածաշնչի մի հատվածի ընթերցումով:

ԼՈՒՐԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

ԴԱԼԱՅ ԼԱՄԱՅԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ Ե. Հ. Խ.-Ի ԿԵՆՏՐՈՆ

1973 թվականի հոկտեմբերի 3-ին Դալայ Լաման պաշտոնական այցով եղել է Ե. Հ. Խ.-ի ժենևի կենտրոնում: Էկումենիկ կենտրոնում նրա պատվին կազմակերպված ընդունելության ընթացքում թիբետցիների հոգևոր առաջնորդը հանդիպում է ունեցել Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերի և Ե. Հ. Խ.-ի փոխօգնության հանձնաժողովի տնօրեն Ալան Ա. Բրաշի հետ: Նա շնորհակալություն է հայտնել Ե. Հ. Խ.-ի անդամ եկեղեցիներին աշխարհի տարբեր երկրներում ապրող թիբետցի գաղթականներին ցույց տրված օգնության համար: 1962—1970 թվականներին Ե. Հ. Խ.-ի միջոցով նրանց տրված օգնությունը կազմել է ավելի քան 1,8 միլիոն դոլար:

Դալայ Լաման իր առաջին ճանապարհորդությունն է կատարում Եվրոպայում: Նա ծրագրել է այցելել տասներկու երկրներ, որտեղ հանդիպումներ է ունենալու զանազան կազմակերպությունների պատասխանատու անձանց հետ, որոնք օգնել են թիբետցի աքսորյալներին ապաստան գտնելու տարբեր երկրներում: «Բացառապես մշակութային և կրոնական բնույթի» այս շրջագայության ընթացքում Դալայ Լաման, ընկերակցությամբ իր անձնական խորհրդականների, տեսակցություններ է ունենալու փիլիսոփաների, եկեղեցիների ղեկավարների և բազմաթիվ այլ մասնագետների հետ ժամանակակից մարդկությունը հուզող հիմնական հարցերի շուրջ: Բացի այդ, նա այցելություններ է տալու Եվրոպայում հաստատված թիբետական զանազան համայնքների:

Ե. Հ. Խ.-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ

Ֆինլանդիայի օրթոդոքս, հռոմեական կաթոլիկ և բողոքական համայնքները միասնաբար նշել են Ե. Հ. Խ.-ի 25-րդ տարեդարձը էկումենիկ մի արարողության ընթացքում, որը տեղի է ունեցել Հելսինկիի լութերական տաճարում 1973 թվականի սեպտեմբերի 30-ին և որը հաղորդվել է Ֆինլանդական հեռուստատեսության կողմից: Իր տեսակի մեջ սա առաջին արարողությունն է Ֆինլանդիայում: Արարողությունը կազմակերպվել է Ֆինլանդիայի էկումենիկ խորհրդի նախաձեռնությամբ, որի գլխավոր քարտուղարը՝ Ռիստո Կանտելը, հեռուստատեսությամբ մեկնաբանել է սույն պաշտամունքի էկումենիկ նշանակությունը: Պաշտամունքից հետո, որը տեղի է ունեցել մասամբ օրթոդոքս ծեսով, Ֆինլանդիայի հռոմեական կաթոլիկ եկեղեցու եպիսկոպոսը ընթերցվածներ է կարդացել Աստվածաշնչից: Մեթոդական և ադվենտիստական եկեղեցիների ներկայացուցիչները նմանապես ակտիվորեն մասնակցել են սույն արարողությանը: Հելսինկիի լութերական եկեղեցու եպիսկոպոս և Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի անդամ Այմո Նիկոլայնենը արտասանել է ոգեշունչ մի քարոզ է-

կումենիկ ոգով: Արարողության երաժշտական մասը կատարվել է լութերական, հռոմեական կայծոլիկ և օրթոդոքս եկեղեցիների երգչախմբերի կողմից:

ԱՆՏԻԼՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տասնվեց տարվա ջանքերից հետո ծնունդ առավ Անտիլյան եկեղեցիների կոնֆերանս կազմակերպությունը, որն իր մեջ համախմբում է Անտիլյան շուրջ 30 կղզիների 16 հարանվանություններ, և որի ստեղծման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 1973 թվականի նոյեմբերի 13—16-ը Քինգստոնի (Ջամայկա) սուրբ Ղուկաս անգլիկան եկեղեցում:

Սույն կազմակերպության ստեղծումը ջերմորեն է ողջունվել Ե. Հ. Խ.-ի կողմից որպես պատմական մի իրադարձություն համաշխարհային էկումենիկ շարժման մեջ: Բացման արարողությանը նախագահել է Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը: Նա իր ելույթում Անտիլյան եկեղեցիների կոնֆերանսի ծնունդը գնահատել է որպես բարի կամքի արտահայտությունը տարբեր գաղափարախոսություններ և տարբեր մշակույթներ ունեցող երկրների այն եկեղեցիների, որոնք ցանկանում են համագործակցել Աֆրիկայի, Ասիայի և այլ ցամաքամասերի համանման կազմակերպությունների օրինակով՝ որպես քրիստոնյա եղբայրներ միասնաբար պայքարելու ընդդեմ շահագործման քաղաքականության, անարդարության, ռասսայական խտրականության, հանուն մարդկային արժանավորության և Ավետարանի ակրոբունքի գործադրման սոցիալական և տընտեսական կյանքում: Հռոմեական կայծոլիկ եկեղեցին, առաջին անգամ լինելով, հիմնադիր անդամներից է եղել տեղական մակարդակով էկումենիկ նման մի կազմակերպության:

Սույն կազմակերպությունը ներկայացնում է ավելի քան 8 միլիոն քրիստոնյաներ տարբեր եկեղեցիներից, որոնք մինչև այժմ իրար նկատմամբ տրամադրված են եղել անհանդուրժողությամբ և անհաշտ հակառակությամբ:

ՀԱՎԱՏՈ ԵՎ ԿԱՐԳԻ ՀԱՆԴՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻԿԱ ԺՈՂՈՎԸ ԳԱՆԱՅՈՒՄ

Ե. Հ. Խ.-ի Հավատո և կարգի հանձնաժողովի 190 անդամները սույն թվականի հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 5-ը հավաքվելու են Գանայի համալսարանում:

Հանձնաժողովը, որի հերթական նստաշրջանները գումարվում են երեք տարին մեկ անգամ, այս ժողովում հանրագումարի է բերելու եկեղեցիների միության որոնման ճանապարհին բարձրացված հարցերի կապակցությամբ մինչև այժմ ձեռք բերված արդյունքները, ինչպես նաև ծանոթանալու է «Վերլուծել այն հույսը, որ մեր մեջ է» թեմային նվիրված ուսումնասիրության առաջին արդյունքներին:

Հանձնաժողովի վերջին հանդիպման ընթացքում, որը տեղի էր ունեցել 1971 թ. Լուվենում (Բելգիա), եկեղեցիներին առաջարկված այս ուսումնասիրության նպատակն էր եղել աշխարհի տարբեր մասերում ապրող քրիստոնյաներին մղել, որպեսզի անկեղծորեն արտահայտեն իրենց քրիստոնեական համոզմունքները ժամանակակից լեզվով: Այս կապակցությամբ մինչև այժմ ավելի քան 45 խմբեր են կազմվել 35 տարբեր երկրներում: Նրանցից մի քանիսը իրենց աշխատանքները ավարտելու են մինչև այս տարվա հուլիս ամիսը, որով Հավատո և կարգի հանձնաժողովը հնարավորություն է ունենալու գնահատման ենթարկելու ուսումնասիրության նախնական արդյունքները:

Եկեղեցիների միության որոնման ճանապարհին բարձրացված հարցերը քննարկվելու են երկու այլ ուսումնասիրությունների լույսի տակ՝ «Եկեղեցիների միություն և մարդկության միություն», «Միության հրդեցքներ և միավորման մոդելներ»: Լուվենի հանդիպման ընթացքում էկումենիկ շարժման նպատակն արտահայտվել էր հետևյալ ձևակերպումով. «Տեսանելի միություն մինչև հավատի և մինչև հաղորդության մեջ»: Առաջիկա ժողովը քննարկելու է, թե այդ միությունը ինչպե՞ս կարող է ավելի հստակ կերպով արտահայտվել տարբեր եկեղեցիների կողմից և թե, վերոհիշյալ ձևակերպման համաձայն, ինչպե՞ս պետք է գնահատել մկրտության և հաղորդության խորհրդի վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունները:

Հանձնաժողովի անդամներին ուղղված մի շրջարերական նամակում Հավատո և կարգի հանձնաժողովի քարտուղարության տնօրեն դոկտ. Լուկաս Վիշերը ընդգծել է Գանայի ժողովի կարևորությունը 1975 թ. Զակարտայում կայանալիք Ե. Հ. Խ.-ի 5-րդ համաժողովի կապակցությամբ, համաժողով, որի գլխավոր թեման է լինելու՝ «Քրիստոս ազատագրում է և միացնում»: Հավատո և կարգի հանձնաժողովը այդ համաժողովում կոչված է նպաստելու քննարկվելիք վեց ենթաթեմաներից երկուսին. «Դավանել այսօր Քրիստոսին» և «Միության պահանջները»:

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ Ե. Հ. Խ.-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

«Ցեղային խտրականությունը անհամատեղելի է Աստվածաշնչի ուսմունքի հետ», հայտարարել է Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների ֆեդերացիայի նախագահ Վալտեր Սիգրիստը աշխատանքային մի ժողովի ընթացքում, որը տեղի է ունեցել 1973 թ. նոյեմբերի վերջերին Բեռնում, և որին մասնակցել են Ե. Հ. Խ.-ի 8 ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հավատո և կարգի հանձնաժողովի քարտուղարության տնօրեն դոկտ. Լուկաս Վիշերը և Ե. Հ. Խ.-ի կենտրոնական կոմիտեի անդամ, շվեյցարացի պրոֆ. Ժան Լոխմանը:

Անցած տարվա մայիսին Շվեյցարիայի Բողոքական եկեղեցիների ֆեդերացիան Ե. Հ. Խ.-ին ուղարկել էր մի նամակ, որի մեջ քննադատությանը էին ենթարկվել ցեղապաշտության դեմ մղվող պայքարի կապակցությամբ Ե. Հ. Խ.-ի ընդունած ծրագրի մի շարք կետեր:

Սույն ժողովը, որի նպատակն է եղել փոխըմբռնման հասնել այդ կետերի շուրջ, ավարտվել է Ե. Հ. Խ.-ի հետ «հաշտարաշխության» մի առաջարկությամբ, որը վերաբերում է «ամենուրեք ցեղապաշտության դեմ պայքարելու հիմնական հարցին»:

Ինչ վերաբերում է ֆեդերացիայի և Ե. Հ. Խ.-ի միջև գոյություն ունեցող անհամաձայնությանը, ֆեդերացիայի պատասխանատու ղեկավարներից մեկն այդ կապակցությամբ հայտարարել է. «Մենք ոչ մեկ առարկություն չունենք ցեղապաշտության դեմ մղվող պայքարի վերաբերյալ Ե. Հ. Խ.-ի ընդունած ծրագրի կապակցությամբ և ոչ էլ դեմ ենք ազատագրական շարժումներին ի նպաստ Ե. Հ. Խ.-ի կողմից արվող նյութական հատկացումներին, սակայն մենք համաձայն չենք 1972 թ. Ութրեխտի ժողովում ընդունված այն որոշմանը, ըստ որի նախատեսվում է վերացնել Ե. Հ. Խ.-ի դրամական ներդրումները հարավային Աֆրիկայում»:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՋԱԿԱՐՏԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՐ

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը վերջերս կազմել և աշխարհի տարբեր մասերում գործող եկեղեցական-ազգային խորհուրդներին է ուղարկել Ջակարտայի առաջիկա համաժողովի աշխատանքներին վերաբերող նախապատրաստական մի բրոշյուրի տեքստերի նախագիծը անգլերեն լեզվով: Այդ բրոշյուրի ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն թարգմանությունները պատրաստ կլինեն 1974 թվականի առաջին ամիսներին:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը մի նոր մեթոդ է որդեգրել այս բնագավառում՝ տեքստերի մշակումը վստահելով լեզվական և դավանական տարբեր միջավայրերի պատկանող խմբագիրների: Տեքստերը շոշափում են համաժողովի գլխավոր թեման՝ «Քրիստոս ազատագրում է և միացնում», ինչպես նաև համաժողովի աշխատանքային վեց խմբերին վերաբերող այն ենթաթեմաները, որոնք բոլորն էլ պետք է ուսումնասիրվեն Ե. Հ. Խ.-ի անդամ բոլոր եկեղեցիների կողմից առաջիկա տասնութ ամիսների ընթացքում: Նախապատրաստական այս բրոշյուրի համար առաջարկված տեքստերը, բացի այդ, պարունակում են Ե. Հ. Խ.-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերի մի հրավերնամակը, ինչպես նաև 5-րդ համաժողովի նպատակը, բնույթն ու ոճը սահմանող մի ներածություն:

Նախքան վերոհիշյալ բրոշյուրի վերջնական հրապարակումը, Ե. Հ. Խ.-ն անդամ եկեղեցիներին իրավունք է վերապահել տեքստի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ առաջարկություններ անելու՝ հաշվի առնելով նրանց ուրույն մտահոգություններն ու առանձնահատուկ պայմանները: Ավելի քան 40 երկրների եկեղեցիներ և հրատարակչություններ պատրաստակամություն են հայտնել հրատարակելու սույն բրոշյուրը:

ԱԹԵՆՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԵՐՈՆԻՄՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

1973 թվականի դեկտեմբերի 19-ին Հունաստանի օրթոդոքս եկեղեցու ս. Սինոդը ընդունել է Աթենքի արքեպիսկոպոս Հերոնիմոսի հրաժարականը արքեպիսկոպոսական Աթոռից: Հունաստանի օրթոդոքս եկեղեցու հոգևոր պետի հրաժարումը իր պաշտոնից, ինչպես ինքն է նշել Աթենքի Մայր տաճարում իր նախագահության ներքո տեղի ունեցած մի արարողության ընթացքում, թելադրված է եղել Հունաստանի քաղաքական գործիչների և հույն եկեղեցու մի շարք բարձրաստիճան հոգևորականների կողմից իր դեմ ուղղված քննադատություններից և հարձակումներից, որոնք «վնաս են հասցնում եկեղեցու վարկին և հեղինակությանը»:

1967 թվականին նոր իշխանության գլուխ անցած Պապադոպուլոսի կառավարության կողմից պաշտոնի կոչվելուց հետո, հույն եկեղեցու հոգևոր պետը նպատակ է ունե-

ցել բարեփոխելու հույն եկեղեցու կառուցվածքը, բարելավելու հույն հոգևորականության դաստիարակության գործը և եկեղեցու վարչական գործերի տնօրինումը դուրս բերելու պետական ենթակայությունից: Նա ցանկանում էր այդպիսով բարձրացնել եկեղեցու հեղինակությունը և հեռացնել ոչ պիտանի տարրերին: Սակայն որոշ թվով եպիսկոպոսներ հակադրվեցին նրա այդ միջոցառումներին՝ մեղադրելով նրան միանձնյա ղեկավարության մեջ:

Հույն օրթոդոքս եկեղեցու հարաբերությունները Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքության հետ, որի հոգևոր իրավասության տակ են գտնվում Հյուսիսային Հունաստանի 39 եպիսկոպոսություններ, սկսեցին վատթարանալ այն բանից հետո, երբ Հերոնիմոսը ս. Սինոդի մնայուն անդամ նշանակեց իր անմիջական շրջապատից որոշ մարդկանց: Այդ որոշումը հետագայում պետական խորհրդի կողմից չեղյալ հայտարարվեց Տիեզերական պատրիարքության բուռն բողոքների և երկու եպիսկոպոսների ազդու միջամտության հետևանքով, և այնուհետև հույն եկեղեցու նվիրապետության կողմից նշանակվեցին նոր անդամներ 1928 թվականից ի վեր ուժի մեջ եղող համաձայնագրի հիման վրա:

Հույն եկեղեցու ծոցում հետզհետե ուժեղացող լարվածությունները և գործադրված ճնշումները ստիպել էին Հերոնիմոս արքեպիսկոպոսին հրապարակավ բազմիցս արտահայտվել իր պաշտոնից հրաժարվելու հնարավորության մասին:

Հույն եկեղեցու ս. Սինոդը Աթենքի արքեպիսկոպոսական Աթոռի տեղապահ է նշանակել Կալավրիտայի և Այգիալեյի միտրոպոլիտ Գեորգիոսին:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայտնի աստվածաբան պրոֆ. Օսկար Կուլմանը վերջերս Փարիզի բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիայում, որի անդամն է նա, մի զեկուցում է կարդացել Երուսաղեմի էկումենիկ ինստիտուտի մասին:

Իր զեկուցման մեջ նա ընդգծել է էկումենիկ կարևոր նշանակությունը այնպիսի մի աստվածաբանության, որը հիմնված պետք է լինի ոչ թե քարացած ըմբռնումների վրա, այլ քրիստոնյա անհատի փրկության պատմության վրա:

Անդրադառնալով վերոհիշյալ ինստիտուտի և մոսկիսական ու մահմեդական կրոնների ներկայացուցիչների միջև հաստատված փոխադարձ սիրալիր հարաբերություններին՝ պրոֆ. Կուլմանը հույս է հայտնել, որ Երուսաղեմի էկումենիկ ինստիտուտը կդառնա աշխարհի այդ մասում խաղաղության վերահաստատմանը նպաստող կարևոր մի կենտրոն:

Այս ինստիտուտը այժմ ունի աստվածաբանության 24 դասախոսներ, որոնք պատկանում են օրթոդոքս, կաթոլիկ և բողոքական դավանություններին: Ներկայումս ինստիտուտը ղեկավարում է մոնսենյոր Շուսլ Մյուլլերը, Քրիստոնյաների միության քարտուղարությունից:



ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԱՄԻԿՈՆ ՔԱՀԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1892—1974)

1974 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում, 82 տարեկան հասակում, վախճանվեց տ. Մամիկոն քհն. Աբրահամյանը:

Հանգուցյալը ծնվել է 1892 թվականին

Ախալքալաքի շրջանի Ագանա գյուղում, գյուղացու ընտանիքում:

Սկզբնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում և մանուկ հասակից որպես դպիր ծառայել գյուղի եկեղեցում:

1912—1915 թվականներին հետևել է Ներսիսյան դպրոցի դասավանդություններին և, հաջողությամբ քննությունները հանձնելով, ստացել ավարտական վկայական:

1916 թվականին Թբիլիսիի վանքի եկեղեցում ձեռնադրվում է քահանա՝ ձեռամբ մեծագիստրոս Մեսրոպ արքեպիսկոպոսի, և հոգևոր հովվության հրավիրվում իր ծննդավայրը՝ Ագանա:

1918 թվականին ընտանիքով տեղափոխվում է Թբիլիսի և նշանակվում Զիգրաշեն եկեղեցում որպես ժամասաց քահանա: Ապա քահանայագործում է մինչև 1972 թվականը վրահայոց թեմի եկեղեցիներում:

1972 թվականին անցնում է թոշակի:

1974 թվականի հունվարի 22-ին Թբիլիսիի ս. Էջմիածին եկեղեցում կատարվում է հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Մերայդարյանի:

Այնուհետև առաջնորդ սրբազանը նախագահում է հանգուցյալի վերջին օծման և թաղման արարողությանը և դամբանական խոսում հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին:

Հանգի՜ստ տ. Մամիկոն քհն. Աբրահամյանի ոսկորներին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ*
(1944—1973)

8603. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ: [Լուրեր, եկեղեցական բեմ]: 1962, դեկտ., էջ 16—17:

Բովանդ.՝ **Նոյեմբերի 24-ին, շաբաթ,** [Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի «եկուցումը ճեմարանում, մեծն Ներսես Հայրապետի կյանքի և գործունեության մասին]:—**Դեկտեմբերի 20-ին, հինգշաբթի,** [ճեմարանի երեք սաների ավարտաճառների հրապարակային պաշտպանությունը. Նարեկ արեղու Շաքարյան—«Գնորգ Զ կաթողիկոս Չորեքշյանի կյանքն ու գործունեությունը»: Հակոբ սարկավագ Գյոկչյան—«Խրիմյան Հայրիկը որպես մատենագիր և մանկավարժ»: Անաստաս սարկավագ Մովսիսյան—«Հայ ազգագրությունը և Գարեգին եպիսկոպոս Սրբվանձտյանը»]:—**Դեկտեմբերի 21-ին, ուրբաթ,** [Շաբաթ վարդապետ Ամենյանի դասախոսությունը ճեմարանում, Երուսաղեմի Ս. Հարության տաճարի նորոգության մասին]:

8604. ՄԱՆՆԱՎՈՐ վարդապետական գավազանի տվչություն Մայր Աթոռում: 1962, օգոստ., էջ 12—14:

Նկ.՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը՝ իր ձեռնադրած վարդապետներին տալիս է խրատական:—Տ. Խաղ և Հայկազուն արքեպիսկոպոսները նոր ձեռնադրված վարդապետների հետ:

8605. ՄԱՏԵՆԱՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ:—Ներբող սուրբ Էջմիածնի: [Բանաստեղծություն]: 1962, մայիս, էջ 83:

8606. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ:—Օշականում: [Բանաստեղծություն: Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ]: 1962, մայիս, էջ 27:

8607. ՄԱՐԿՈՍ ԱՐԱ:—Բանասիրական նոթեր: 1962, փետրվար, էջ 57—59:

Բովանդ.՝ 1. Դասական թվեր ցուցնող հայկական տառեր ԺԳ դարու բուլղարական ձեռագրի մը մեջ:—2. Անհետացած հայ գաղութ մը Բուլղարիոն Ռազգրադ քաղաքին մեջ:

8608. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ Լ[ԵՎՈՆ]:—Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանը: (Մեծանուն հայրենասեր, հայագետի հիշատակին, նրա մահվան 10-ամյակի առթիվ): 1962, հունիս, էջ 23—25:

8609. ՄԵՑԵ ԱՆՏՈՒՆ:—Հայ այբուբենը գլուխ գործոց մրն է: 1962, մայիս, էջ 84:

8610. ՄԵՍՐՈՊ Մաշտոց: [Գործ նկարիչ՝ Ա. Պապայանի]: 1962, մայիս, ներդիր:

8611. ՄԵՍՐՈՊ Մաշտոց: [Գործ նկարիչ՝ Հրաչիկ Ռուխկյանի]: 1962, մայիս, ներդիր:

8612. ՄԵՍՐՈՊ Մաշտոց: [Գործ նկարիչ՝ Սարգիս Վարդանյանի]: 1962, մայիս, ներդիր:

8613. ՄԵՍՐՈՊ Մաշտոց: [Գործ նկարիչ՝ Ստեփան Ներսիսյանի]: 1962, մայիս, ներդիր:

8614. ՄԻՆԱՍՅԱՆ ԱՐՓԻԿ:—Սաադիի հայերեն թարգմանությունները: [Ուսումնասիրություն]: 1962, օգոստ., էջ 51—55:

8615. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՆԱՆՍԵՆ:—Մաշտոցի շիրմաքարի առաջ: [Բանաստեղծություն: Նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին]: 1962, մայիս, էջ 31—32:

8616. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ:—Հայոց այբուբեն: [Բանաստեղծություն: Նվիրված Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին]: 1962, մայիս, էջ 80:

8617. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ:—Սուրբ Մեսրոպ Մաշտոց: [Գործ նկարիչ՝ Ս. Ներսիսյանի]: 1962, մայիս, ներդիր:

8618. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Շ[ՈՒՇԱՆԻԿ] Գ.:—Նոր-Ջուղայի հայկական տպարանը և այնտեղ տպագրված «Խորհրդատետր»-ը: [Խաչատուր Կեսարացու մասին: Ուսումնասիրություն]: 1962, դեկտ., էջ 46—51:

Նկ.՝ Նոր-Ջուղայի 1641 թ. Խորհրդատետրի 1-ին էջը:—Վերջին էջը հիշատակարանով:—Մի էջ Նոր-Ջուղայի 1647 թ. Ժամագրքից:—Մի էջ Նոր-Ջուղայի 1641 թ. Հարանց վարքից:

8619. ՉՈՒԲԱՐՅԱՆ ՂՈՒԿԱՍ:—Մեսրոպ Մաշտոցի արձանը Մատենադարանի առաջ: [Հեղինակ քանդակագործ՝ Ղ. Չուբարյան]: 1962, մայիս, ներդիր էջ:

8620. ՊԱԼՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ:—«Լույս ի յայտնութիւն հեթանոսաց»: (Քարոզ խոսված Մայր Տաճարում, Տեառնընդառաջի օրը): 1962, մարտ, էջ 21—22:

8621. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ բացում Սուրբ Ներսես Շնորհալու անվան աստվածաբանական դպրոցի: [Հոկտեմբերի 28-ին, ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի Էվենստոն քաղաքի Ուգունյան տան մեջ]: 1962, դեկտ., էջ 34:

8622. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ընդունելություն: Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի նախագահ Ա. Ե. Քոչինյանը ընդունեց Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին: 1962, մարտ, էջ 9:

8623. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: [1962-ի հոկտեմբերի սկզբին Ս. Էջմիածնում Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու մասին]: 1962, մարտ, էջ 8:

8624. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: [Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ի հրավերով Վազգեն Ա-ի պաշտոնական աղցելությունը (փետրվարի 16—21) Եփրեմ Բ կաթողիկոսին և Վրաստանի հայոց թեմին]: 1962, մարտ, էջ 12:

8625. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: Հայաստանյայց առաքելական եկեղեցու եկեղեցիների համաշխարհային խորհրդին անդամակցության մասին: 1962, սեպտ., էջ 18:

8626. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: [Վազգեն Ա-ի մասնակցությունը Չեխոսլովակիայի Կարլովի-Վարի քաղաքում կայացած խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական ժողովին]: 1962, մայիս, էջ 16:

8627. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: [Վազգեն Ա-ն մայիսի 25-ին ընդունեց Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք Աթենագորասի ներկայացուցիչ, Մեղոյաի եպիսկոպոս Տ. Էմիլիանոս Դիմադիսին]: 1962, մայիս, էջ 17:

Նկ.՝ Վեհափառ Հայրապետը Էմիլիանոս եպիսկոպոսի հետ:—Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Աթենագորասը և Հայոց պատրիարք Շնորհք արքեպիսկոպոսը Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանում:

8628. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ հաղորդագրություն: Վե-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի №№ Դ—ԺԱ-ից և 1974 թվականի № Ա—Բ-ից:

հափառ Հայրապետի Բաքու կատարած այցելության մասին: 1962, հուլիս, էջ 8:

8629. ՊԱՊԱՅԱՆ Ա.:—Մեսրոպ Մաշտոց: [Գործ. ոկարիչ՝ Ա. Պապայանի]: 1962, մայիս, նեղդիր:

8630. ՌԱՖԱՆՈՎ Վ. Ֆ.:—Էջմիածին: Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք-կաթողիկոս Վազգեն Ա-ին: ՍՍՀՄ Մինիստրների Սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի ողջույնի ձեռագիրը Ամենայն Հայոց Հայրապետին՝ ազգային-եկեղեցական ժողովի բացման առթիվ: 1962, հոկտ.-նոյեմբ., էջ 8:

8631. ՌՈՒԽԿՅԱՆ ՀՐ[ԱՉԻԿ]:—Մեսրոպ Մաշտոց: [Գործ. ոկարիչ՝ Հր. Ռուխկյանի]: 1962, մայիս, նեղդիր:

8632. ՍԱՐԳԱՎԱԳՆԵՐԻ ձեռնադրություն Մայր Աթոռում: 1962, սեպտ., էջ 25:

8633. ՍԻՐՈՒՆԻ Հ[ԱԿՈԲ] Մ.:—Պոլիս և իր դերը: [Ուսումնասիրություն]: 1962, սեպտ., էջ 28—37, դեկտ., էջ 35—45, 1963, հունվար, էջ 31—42, փետրվար, էջ 28—38, մարտ. էջ 10—21, ապրիլ, էջ 24—41, մայիս, էջ 13—24, հունիս, էջ 25—37, հուլիս-օգոստ., էջ 46—58, սեպտ.-հոկտ., էջ 24—38, նոյեմբ., էջ 18—28, դեկտ., էջ 13—20, 1964, հունվար, էջ 7—16, ապրիլ, էջ 26—38, մայիս, էջ 51—60, հունիս, էջ 16—25:

